



ହନ୍ତ

ପୁରସକାର
ପୁରୀରୂପିତ୍ତବା
ଶୁଦ୍ଧି
ଶ୍ରୀମତୀ ଲେଖକ

ଓଟ୍ଟ ସର୍ବ



1977



ՍԻՈՆ

ԾԱ. ՏՈՐ-ԼՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

1977
1977

Ապրիլ

Թիւ 4

S I O N


VOL. 51

No. 4

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem



ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԵՑՈՅՑ

Իւրաքանչիւր ժողովուրդի իր դարաւոր կեանքին մէջ կը հաշուէ դէպէեր կամ դէմֆեր, որոնի իր հետագայ օրերուն նոր եւ տարբեր ուղղութիւն տուած են, եւ որոնի, նոյնիսկ եթէ դարեր անցած են, տակաւին իրքեւ ուղեցոյց եւ իրքեւ կրակէ սիւն՝ զինք կ'առաջնորդեն: Ժողովուրդ մը աննցնէ է որ իր հոգեկան ուժը կը ստանայ, իր կամքը կը զինէ, իր ապագան կ'իմաստաւորէ: Այդ դէպէերն ու դէմֆերը իր երկար ճամրուն մղոնաքարերն են, կորողուած պատմութեան էջերուն վրայ, անցեալն ու ապագան կամքող եւ ներկային ուղղութիւն տուող:

Եւ սակայն ժողովուրդի մը պատմութիւնը իրքեւ ամրող-ջութիւն, մեռած եւ անցեալին մէջ քաղուած բան մը չէ, բրածոյ չէ, ոչ ալ քանզարանի զարդ կամ զեղեցկօրէն գծուած պաստառ: Ան ապրող եւ շնչող գոյութիւն մըն է, բուրայ մը, վկայարան մը: Եւ ամենէն աւելի, ան յաւիտենական իմաստուն ուսուցիչն է, որուն պէտք է դիմեն մարդիկ՝ իրենց կեանքը վարել սորվելու համար:

«Պատմութիւնը կը կրկնէ ինքզինք» ըստուած է. դժբախտ են այն ժողովուրդները, որոնի չեն կրնար վերադառնալ իրենց պատմութեան եւ դաս առնել անկէ. դժբախտ՝ որովհետեւ տեւականօրէն պիտի կրկնեն այն սխալները զորս գործած են անցեալին եւ պիտի ըլլան աւելի վտանգուած, աւելի աղետահար: Պատմութեան վերադառնալ եւ անկէ սորվիլ՝ կը նշանակէ կամք ունենալ ներկան նիշդ ապրիլ ուգելու եւ ապագան կերտելու ներկայով. քայլ մանաւանդ, կը նշանակէ քաջութիւնը ունենալ ինքնաքննադատութեան, անկողմնակալ եւ միայն տրամարանութեան վրայ հիմնուած դատողութեան: Միայն այսպէս է որ կարելի է զգուշանալ անցեալի սխալները կրկնելէ եւ ժողովուրդ մը աղետներէ փրկելէ:

Մեր պատմութիւնը բազմաքիւ դասեր ունի մեզի տալիք: Ամենէն առաջ, անկէ է որ պիտի կարենանք հանել դիմագիծը մեր ցեղային նկարագրին. նկարագիր՝ որ, շատ մակերեսային դատումով եւ սխալ ըմբռնուած ինքնառնադատութեամբ, յանախ մենք իսկ սեւցուցած ենք, մեզի վերագրելով թերութիւններ զորս բացարձակապէս չունինք: Միւս կողմէ, երբալով տարրեր չափազանցութեան, մեր նկարագրին վերագրած ենք առաքինութիւններ որոնց գոյութիւնը միշտ չէ որ առկայ է մեր պատմութեան մէջ: Քաջութիւնն ու պարկեշտութիւնը կը պահանջեն որ անաշառ ըլլանք նախ մենք մեր հանդէպ, որպէսզի կարենանք ըսել. «Մենք ա՛յն ենք ինչ որ ենք» ու ապրինք եւ զործենք այդպէս: Հաւասարակշռուած այսպիսի դատումի մը հետեւանքը միայն դրական եւ օգտակար կրնայ ըլլալ, որովհետեւ չենք օրօրուիր պատրանքներով, ո՞չ ալ մեր կուրծքերը կը ծեծենք մեր չունեցած թերութիւնները ողբալով: Ու միայն ասկէ եսք է որ կրնանք հանդարտորէն բնենք մեր պատմութիւնը, վերլուծել այն դէպքերը որոնք մեր կեանքը յեղաշրջած են դէպի լաւը կամ դէպի վատը, փնտոել պատնառները, բնենք պայմանները, եզրակացութիւններ հանել եւ զանոնք գործածել մեր ներկային համար: Որովհետեւ, մանաւանդ մեր նորագոյն շրջանի պատմութեան պարագային, մեր անզօրութեան զայրոյթին մէջ, մեր ձախողութիւնները յանախ վերագրել փորձած ենք մեր նկարագրին, մեր ցեղային տհասութեան, անիեւատեսութեան, կարծեցեալ անմիարանութեան եւայլն:

Մինչդեռ վերջին երկու դարերու մեր պատմութիւնը շեղ իրագործում մըն է, զապանակուած աշխարհի ժողովուրդները առաջնորդող մեծագոյն մղիչ ուժէն: Ազատութեան տենչէն: Այդ տենչը, ազատութեան այդ սէրը մեր ցեղի գոյութեան հիմնաքարն է: Ո՞ր ժողովուրդը իր սկզբնաւորման աւանդական պատմութիւնը կը սկսի ազատութեան համար մղուած պատերազմով. ո՞վ իրեւ իր նախահայր ունի ազատատենչ Հայկ մը, որ ամէն հանգստութիւն ու բարիք պիտի ունահարէ եւ իր ցեղախումբով հեռանայ դէպի միայն ժայռերով հարուստ լեռնաշխարհ մը՝ լոկ ազատ կարենալ ապրելու համար: Հայկը եւ Բէլը մեր պատմութեան ամբողջ ընթացքին ապրած են ու ֆալած մեր հետ, որովհետեւ հազարամետներու մեր կեանքը եղած է անընդմէջ պայքար մը ազատութեան համար: Հետզին վերանորոգուող գիտակցութեամբ է որ վերջին երկու դարերուն մենք դիմած ենք դէպի ազատութեան թերելիք արշալոյսր, որուն նառագայթները մեր երկնակամարին վրբայ շողարձակուած են արիւնի երկար ու քանձր գիծերով: Դարերու սորեկանման կեանքը եթէ կեանք կարելի է կոչել խոտի այդ գոյութիւնը՝ չեր բացուցած ազատ ապրելու մեր միշտ բոցավառ տենչը, որ իր պարբերական բռնկումներէն եսք ի վերջոյ հրդեհի կը վերածուէր անցեալ դարու երկրորդ կէսէն սկսեալ, մեզ իսկ այդ բելու ահաւոր կարելիութեան առջեւ դնելով մեզ:

Ազատագրութեան եւ հանգիստ ու բարօր կեանքի մը համար մեր մղած պայքարը եթէ ձախողութիւններու հանդիպեցաւ, այդ անոր համար էր որ մենք շատ անվա՛թ էինք եւ համբակ այն «գիտութեան» մէջ որ դիւանագիտութիւն կը կոչուի, եւ սակայն

որուն վատահած էինք զիշաւորաբար մեր երազներուն եւ տեսչերուն իրականացումը։ Եթէ մեր վատահութեան մէջ խարուեցանք, եթէ մնացինք անուղղայ միամիտներ, ասիկա մեզի պէտք է սորվեցնէ կարեւորագոյն դասերէն մին զոր մեր պատմութիւնը կրնայ տալ։ Վատահիլ միայն մեր կարողութիւններուն, քաղաքական իեանքի մէջ պարզամիտ չըլլալ եւ մանաւանդ պատրաստուիլ եւ տքնազան աշխատիլ լուութեամբ, կարենալ օգտուելու համար պատեհութիւններէն որոնք յանկարծ կրնան հասնի եւ որոնցմէ նիշդժամանակին եւ լաւագոյն կերպով օգտուիլ գիտնալը քաղաքական կեանքի մեծագոյն առաքինութիւնը կը սեպուի։ Եւ օրերն ու տարիները որոնք պիտի զան եւ զորս պիտի ապրինք, մեզի պիտի սորվեցնեն այս բոլորը, մենք որ տակալին շշմած այն ահաւոր հարւածէն որ վաթսուն տարի առաջ տրուեցաւ մեզի, շփոք ու շուար կեցած մեր կեանքի հակատագրական հանգրուանին, հարցումներ կ'ուղղենք մինք մեզի, պատճառներ եւ պատասխանառուներ կը փնտուենք մեզ շանթահարող աղէտին եւ զանք կ'ընենք մեր վրայ արշաւող հազար զոյնի ուրականներէն պաշտպանուելու։ Մեծ եղենին համար շատ մը պատճառներ կրնան ըլլալ, եւ սակայն անոնցմէ ոչ մին եւ ոչ ալ բոլորը հաւաքարար կրնան երկվայրկեան մը իսկ պատճառարանի կամ արդարացնել սառնարիւնութեամբ ծրագրուած սպանդը։ Այս աշխարհին մէջ մարդկային ունեէ մէկ էակի գոյութեան սպաննութեամբ վերջ տրուիլը ո՛չ մէկ արդարացում ունի. ասիկա դէմ է աշխարհի բոլոր կրօնէններուն եւ կրօնական ըմբռնումներուն, ասիկա դէմ է ընկերային բոլոր սկզբունքներուն, եւ վերջապէս ասիկա դէմ է բնութեան։

Ազատագրական մեր պայքարին մէջ մենք կրնանք սխալներ գործած ըլլալ. այդ սխալներուն փնտուտուքը, ինչպէս ըսինք, մեզի դասեր պիտի սորվեցնէ, որով զաննեք կրկնելէ պիտի զգուշաննեք ապագային։ Սակայն պայքարը որ մղուեցաւ սուրբ էր, որովհետեւ սուրբ էր նպատակը այդ գուպարին.՝ Ազատութիւն։ Մեր Եկեղեցին, իր հազարամետայ կեանքի ընթացքին մեզ դաստիարակած է բարձրագոյն առաքինութիւններով, որոնց մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ արեւին տակ բարձրանակատ քալելու եւ ազատ ապրելու սկզբունքը։ Ի զուր չէ որ «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց»ը Հայ հաւատացեալէն արցունք խլած է եւ կը խլէ դարերէ ի վեր. որովհետեւ ան իր մէջ կը խտացնէ մեր ցեղին սուրբ ծգուունները, երազներն ու տեսչերը, որոնց իրագործման համրուն վրայ ան այնքան սուկալի կերպով զգեստնուեցաւ, բայց չմեռաւ։

Այսօր խննարհինք ազատութեան համար զոհուածներուն յիշատակին առջեւ, մեր պատմութիւնը առնենք որպէս մեզի ուղեցոյց եւ աշխատինք, որովհետեւ այս կը պահանջեն մեր հազարամեայ կեանքի բոլոր հերոսները։

Ա. Գ.



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Եջմիածին, Ա. Զատիկ, 1977 թ.

Նորին Ամենապատուրին

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան

«Քրիստոն յարեաւ ի մեռելոց»

Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնի բարձունքից երջանիկ ենք Զեզ վերստին բերելու մեծ աւետիսը ամենայաղթ յարութեան Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի: Լուսաշող շնորհները երաշալի յարութեան, բող առատապէս բաշխուեն Տիրախնամ Սուրբ Արքուիդ բոլոր եկեղեցական համայնքներին յառաւել շինութիւն մեր հաւատաւոր եւ յուսացեալ ժողովրդի հոգեւոր ու ազգային մշակութային կեանքի:

Զեզ, սիրելի Սրբազն Եղբայր, ձեր եկեղեցիների ուխտապահ սպասաւորներին ու ձեր եկեղեցեաց վարչական մարմինների բոլոր անձնուէր անդամներին, մաղթում ենի մշտանորոգ հոգեւորներնչանքներ ու անսպառ եռանդ, շարունակելու ձեր կրօնական ու ազգապահպահ սրբազն առաքելութիւնը:

Աղօքում ենի նաեւ անձանձրոյթ, որ լուսաւորուած աշխարհի Փրկչի յարութեան շնորհներով, մեր օքերի մարդիկ ու ժողովուրդները համայն գտնեն նշանակիտ ուղին իրենց կեանքի խաղողութեան, համերաշխ գործակցութեան ու բարօրութեան:

«Արդ, Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց. քանի մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց: Որպէս Աղաւան ամենեփին մեռանին, նոյնապէս եւ Քրիստոսի ամենեփեան կենաւանագեն» (Ա. Կորնթ. 20:22):

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անքիլիս - Լիբանան

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Քարեխնամ Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Ե Ր Ո Ւ Ս Ա Դ Է Մ

Ամեն. եւ Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Ս. Յարութեան հրաշափառ տօնին առքիւ կը փութանի
ներկայացնել Զերդ Ամենապատուութեան Մեր ջերմ շնորհաւորու-
թիւններն ու լաւագոյն մաղթանքները:

Մեր սրտալից աղօքքն է, որ Ս. Զատկի տօնը իր կրօնա-
կան ներշնչումներուն հետ միասին բերէ մեզի ազգային յարու-
թեան յոյսն ու հաւատքը:

Մնամ օրհնածայն սիրոյ ջերմ ողջունիւ

ԽՈՌԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
Կեդրոնական Վարչական Ժողով

Ապրիլ 4, 1977

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արք. Տերտելեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմի

Ամենապատիւ Սրբազն Հայր,

Մօս է Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը, որ մեր սրտերը կը լեցնէ վերածաղկումի եւ վերածնունդի բերկրալի ըգ-գացումներով:

Մեր ժողովուրդը, իբրև առաջին Քրիստոնեայ ժողովուրդ, կանուխէն կայք եւ աղօքարան հաստատեց Քրիստոսակոյն այն հոդին վրայ, ուր այսօր կը շարունակէ Զեր Պատրիարքական Սուրբ Արռողջ գործել, Նորին Ամենապատութեանդ իմաստուն առաջնորդութեամբ:

Սուրբ Զատկուան տօնին առիթով Երուսաղէմը ցնծութեան կրկնակ պատճառներ ունի՝ իբրեւ Քրիստոնեայ հաւատքի կեդրոն եւ իբրեւ հող որ Քրիստոսը ընդունեց:

Այս տօնական առիթով Զեզի կը մաղթենք երկար եւ արեւաշատ տարիներ, իսկ Սուրբ Արռողիդ՝ անսասանութիւն եւ յաջողութիւն:

Խորին յարգանօք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿՐԻ

(1670 — 1749)

1670ին ծնած է Շիրուանի մէջ (Բաղէշ) : Որդին էր ժահտեսի Աւետիքի եւ ձօւարի (Զուհար) .— Սահակ Եպս . Խապայեան , Ցուցակ Զեռ . Ս . Յ . թիւ 2628 , Տետր Զ . էջ 430 :— Ցուցակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1971 , էջ 181 . Զեռ . Ս . Յ . թիւ 1464 :

Դիտ .— Հ . Ն . Ալիխեան սխալած է եւ նոյնացուցած ժամանակակից ուրիշ գրիչ Գրիգորի մը Հետ , որ որդին էր Աւետիս քահանայի եւ Սառայի .— Հանդ . Ամս . 1952 , էջ 188 :

1692ին ձեռնազրուած է վարդապետ Ամբողուտ Վանքին մէջ .— Շողակաթ , 1970 , էջ 67 , Գ . Բամպուքճեան :

1694 , Օգոստոս 10ին , Երուսաղէմի՞ մէջ Ներրող մը զրած է Երուսաղէմի պատրիարք Կ . Պոլսեցի Յովհաննէս Վարդապետի վրայ .— Սիոն , 1950 , էջ 300 , Հ . Ս . Անասեան :

1704էն առաջ ստացած է եպիսկոպոսական օծում .— Շողակաթ , էջ 67 :

1704 , Մարտ 31ին կը կորունցնէ իր մէծանուն ուսուցիչը՝ Բաղիչեցի Վարդան Վարդապետը .— Շողակաթ , էջ 67 :

1704ին , Վարդան Վարդապետի ժահէն ետք , կը ստիպուի Հեռանալ Բաղէչէն , եւ Տարօն երթալով կը դառնայ միաբան Գլակայ Վանքին , եւ ապա կը կարգուի Առաջնորդ .— Հանդ . Ամս . 1952 , էջ 189-190 : Շողակաթ , էջ 67 :

1710ին , Մէծահրաշի Կիրակէին , ահադին երկրաշարժ մը մէծ վնասներ կը պատճառէ Ս . Կարապետի Վանքին .— Յ . Զեռազրաց Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 50 :

1711 , Մարտ 20ին կը դանուէր Հնձուց Վանքը .— Հանդ . Ամս . 1952 , էջ 197 :

1711 , Սեպտեմբեր 11ին կը դանուէր Կաֆայ , ուր զացած էր նապաստ Հանդանակելու Ս . Կարապետի Վանքին Համար .— Հանդ . Ամս . 1952 , էջ 193 : Սիոն , 1950 , էջ 303 :

1712 , Ապրիլ 10ին կը դանուէր Աղքերման .— Հանդ . Ամս . 1952 , էջ 193 :

1713ին կ'երթայ Աղրիանուապոլիս .— Ցուցակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 51 :

1713 , Սեպտեմբեր 12ին կը դանուէր Բիւղանդիոն , դրամ Հանդանակելով Գլակայ Վանքին պարտքերը վճարելու Համար .— Ցուցակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 52 :

1715 տարւոյ Զատկին դեռ կը դանուէր Կ . Պոլիս : Երուսաղէմ դացող ուխտաւորներու վերադաշներ նոր Գիւղէն նաւ կ'առնէ դառնալու Տարօն իր պաշտօնատեղին .— Ցուցակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 52 , 53 :

1715 , Սեպտեմբեր 13ին Կ . Պոլիս մէջ Գրիգորի անունը կը յիշատակեն Ս . Պատարագի ընթացքին , իրքեւ պատրիարք Երուսաղէմի , երբ ինք կը

ճամբարդէր դէպի Տարօն .— Հաննէ Վարդապետ , Պատմութիւն Երուսաղէմի , 1807 , էջ 121-2 : Սիռն , 1950 , էջ 288 : Մաղաքիս Արք . Օրմանեան , Ազգապատում , 1914 , էջ 2810 :

1716ին , Ս . Ծննդեան ձրագալոյցին կը հասնի Գլակայ Վանքը .— Յուշակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 53 :

1717 , Յուլիս 8ին կը մեկնի Տարօնէն դէպի Բիւզանդիոն .— Հանդ . Ամս . 1952 , էջ 194 :

1717 , Օգոստոս 17ին , Շողակաթի Տօնին օրը կը հասնի Ուսկուտար .— Յուցակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 50 :

1717 , Հոկտեմբեր 2ին Երուսաղէմ կը զրկէ իր անդրանիկ կոնդակը : Երուսաղէմի մէջ իրեն փոխանորդ կը կարգէ Երուսաղէմացի Հաննէ Վարդապետը .— Տ . Հ . Թ . Սաւալանեանց , Պատմութիւն Երուսաղէմի , թրդմ . Մ . Եպս . Նշանեան , 1931 , էջ 690 : Սիռն , 1950 , էջ 288 : Շողակաթ , էջ 67 :

1717ին կը զրէ մասնակի Խնքնակենսագրութիւն մը (1710-1717) .— Տես Յուցակ Զեռ . Ս . Յակոբեանց , Ե . Հատոր , 1960 , էջ 49-53 :

1718ին շղթայ մը կ'անցընէ վիզը , յայտարելով թէ պիտի չհանէ զայն մինչեւ որ Երուսաղէմի Ս . Աթոռը ազատուի իր պարտքերէն .— Հաննէ էջ 136 : Մ . Արք . Օրմանեան , Ազգապատում , էջ 2812 :

1718 , Յուլիս 5ին Կ . Պոլսոյ մէջ պատահած մեծ հրդեհ մը կը տրտմեցնէ եւ զրեթէ յուսակտուր կ'ընէ Շղթայակիր Գրիգորը .— Ազգապատում , էջ 2814-5 :

1719ին կը նախազահէ նաւակատիքին Մայր Եկեղեցւոյ որ փութով վերաշինուած էր .— Ազգապատում , էջ 2815 :

1719ին Ս . Լուսաւորիչ Եկեղեցին կը մաքրուի , եւ Ս . Յարութեան Տաճարի նորոգութեան ժամանակ Ս . Լուսաւորչի մէջ ալ նորոգութիւններ կը կատարուին .— Հաննէ , էջ 190 , 213 : Սաւ . էջ 743 :

1720 , նորոգութիւն Ս . Յարութեան Տաճարի , վերահսկողութեամբ Փոխանորդ Հաննէ Վարդապետի .— Հաննէ , էջ 165 : Սաւ . էջ 692 , 742 : Աստ . Եպս . Տ . Յովհաննէսեանց , Ժամանակադրական Պատմ . Ս . Երուսաղէմի , Ա . Հատոր , 1890 , էջ 447 :

1720 , քանի մը Հասութարեր կալուածներու զնում Յուզպէի մէջ .— Հաննէ , էջ 119 : Սաւ . էջ 694 :

1720 , Փետրուար ամսուն իսթանպուլէն կը մեկնի դէպի Երուսաղէմ .— Սիռն , 1950 , էջ 289 : Շողակաթ , էջ 67 :

1721ին Հալէո Հասնելուն կը նորոգէ տեղույն Երուսաղէմապատկան Հողետունը .— Հաննէ , էջ 130 : Սաւ . էջ 695 : Շողակաթ , էջ 67 :— Դաւանափոխ եղած խումբ մը Հայ ընտանիքներ քաղցր քարոզութեամբ կը յաջողի վերադարձնել Մայր Եկեղեցւոյ ծոցը .— Խազայեան , Յուցակ , Տետր Զ . էջ 427 , Զեռ . Ս . Յիւ . թիւ 2628 :

1721ին , Դամակոսի մէջ զտնուած օրերուն , կը նորոգէ Ս . Սարգս Եկեղեցին .— Սաւ . էջ 695 : Շողակաթ , էջ 67 :

1721 , Փետրուար 12ին կը հասնի Երուսաղէմ .— Հաննէ , էջ 130 : Սիռն , 1950 , էջ 289 :

1721 , կը կանգնէ Ս . Յակոբեանց Տաճարի աւագ սեղանին փառաւոր խաչկալը .— Հաննէ , էջ 134 : Սաւ . էջ 1219-1220 :

1722ին , Ս . Յակոբեանց Տաճարին հիւսիսային պատին վրայ փոքր

մատուռ մը կը ձեւացնէ Ս. Խաչին համար, և եւ կը հաստատէ պատարագամատոյց սեղան։ — Հաննէ, էջ 88, 134։

1723, Կ. Պոլսէն հրաւիրուած տպագրիչ Գրիգոր Երուսաղէմ կու զայ և խնամքով կը նորոգէ եւ կը կազմէ շատ մը հին եւ թանկազին ձեռագիրներ։ — Սաւ. էջ 749: Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, 1967, էջ 22-23: Զ. Հատոր, 1972, էջ 515։

1724ին կը նորոգէ տանիքի վրայ դտնուող՝ Երկոտասանն Առաքելոց հնաշէն Եկեղեցին եւ կը դարձնէ գրքատուն։ — Հաննէ, էջ 89։

1724, Վանքին արեւելեան կողմը դտնուող շարք մը տուներ կը զնէ, Վանքին կը կցէ, եւ պարիսպով կը պատէ։ — Հաննէ, էջ 96։

1724, Կ'ընդարձակէ Ս. Ստեփանոսի Եկեղեցին։ — Հաննէ, էջ 87։

1725ին խաչքար մը կանգնել կու տայ Պոլսէն եկող եւ ծովամոյն եղող հայ ուխտաւորներու յիշատակին։ — Մ. Եպս. Աղաւնունի, Միաբանք եւ Այցելուք Հայ Երուսաղէմի, 1929, էջ 85-86։

1725, կը նորոգէ Յոպպէի Վանքը եւ կը չինէ Ս. Նիկողայոս Եկեղեցին։ — Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, 1956, էջ 242։

1725, կը նորոգուի Ս. Հրեշտակապետաց Վանքը։ — Հաննէ, էջ 135, 238: Սաւ. էջ 748, 1253-4։

1726ին, Ազգին մեծաւորներուն Օգոստոս 16 թուակիր ազդու դիմումին վրայ վիզէն կը հանէ չղթան զոր կը կրէր ութ տարիէ ի վեր։ — Հաննէ, էջ 135-136: Սաւ. էջ 698: Սիոն, 1950, էջ 288-289։

1726, Ս. Էջմիածին Եկեղեցին մէջ երեք նուիրական քարերուն վրայ կը կանգնէ Ս. Սինայի սեղանը, «յիշատակ իւր եւ ամենայն ազգիս Հայոց, որք ջանացին վասն պարտազատութեան, եւ արձակման անրոյն ի պարանոցէ նորին»։ — Հաննէ, էջ 90, 136: Սաւ. էջ 744։

1727ին Ս. Գլխադրի մատուռը չքեղազարդ կը պայծառացնէ։ — Հաննէ, էջ 85: Սաւ. էջ 744։

1727, կը նորոգէ Ս. Ծննդեան Վանքին մէջ վերնայարկի Ս. Աստուածածին Եկեղեցին։ — Սաւ. էջ 745։

1727ին Ակնցի Սեղբեստրոս Ամիրան (խոճայ Սեղբոս) Պոլսէն ուխտի կու զայ Երուսաղէմ, Հետը բներելով Ս. Յակոբեանց Տաճարը ծեփելու եւ բռելու արտօնապիրը։ Գրիգոր պատրիարք այդ առթիւ ճարտար նկարիչ տիրացու Յովհաննէսի ձեռքով գծուած ընտիր պատկերներով կը զարդարէ տաճարին պատերը։ — Հաննէ, էջ 91, 141: Սաւ. էջ 708։ : Գարեգին Կթղ., Հասկ Հայադիտական, 1957, էջ 26-52։

1728ին Կ'իրականանայ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան պարտքերուն ամրողջական Ծնջումը։ — Սիոն, 1950, էջ 289։

1728, չինել կու տայ ընդարձակ ցորենատուն մը, տասներեք լուսամուտներով։ — Յուցակ, Բ. Հատոր, էջ 243։

1728, կը նորոգէ Կեղրոնի Հեղեղատին կամուրջը։ — Հաննէ, էջ 256: Սաւ. էջ 747։

1729ին, Շղթայակրի առաջարկով, Յոյներն ու Հայերը առանձին կը տօնեն Ս. Զատիկը ի Ս. Յարութիւն, որպէսզի ծուազակի առթիւ նախընթաց պարագաներուն պատահած աղիտալի կոխները տեղի չունենան դարձեալ։ — Սաւ. էջ 701։ : Սիոն, 1950, էջ 290։

1729, Ս. Յակոբեանց Վանքին մերձակայ շատ մը տուներ դնելով կը կցէ Վանքին .— Սաւ. էջ 745, 1244, 1245, 1246:

1730ին կը չինուի Ս. Յակոբեանց Տաճարի աւագ սեղանին մարմար-հայ բեմը .— Սաւ. էջ 1221:

1731ին կը չինուի Ս. Գլխազրի մատուռին սատափեայ գեղեցիկ դու-ռը .— Սաւ. էջ 1222:

1732ին կը չինուի Ս. Թէոդորոս Եկեղեցւոյ գեղեցիկ խաչկալը .— Սաւ. էջ 1232:

1733ին կը չինուի Ս. Էջմիածնի գեղարուեստական խաչկալը .— Սաւ. էջ 710:

1733, կը չինուի Ս. Հրեշտակապետաց Եկեղեցիին ոսկեզօծ խաչկալը .— Սաւ. էջ 1252:

1733 Յունիս 11ին կը կորսնցնէ իր անձնուէր եւ հաւատարիմ փոխա-նորդը՝ Երուսաղէմացի Հաննէ Վարդապետը .— Սաւ. էջ 711-712: Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, 1967, էջ 148:

1734ին կը նորոգէ Ս. Փրկչի Եկեղեցին .— Սաւ. էջ 1256:

1735ին կը կառուցանէ քանի մը սենեակներ . կը նորոգէ տնտեսատու-նը եւ կը չինէ նոր ջրհոր .— Սաւ. էջ 745, 1242:

1736 Մայիս 6ին Երուսաղէմէն ճամբայ կ'ելլէ գէպի Կ. Պոլիս. նպա-տակն էր Ս. Աթոռոյ Հրովարտակները նորոգել տալ եւ Հայոց իրաւունքները վերահստատել .— Սիօն, 1866, էջ 123, 185: Սաւ. էջ 719հ :

1736, Յուլիս 23ին կը հասնի Կ. Պոլիս, յոյժ տառապալից ճամբոր-դութենէ յետոյ .— Սիօն, 1866, էջ 126, 185:

1737ին Կ. Պոլիսն բազմաթիւ նամակներ կը գրէ Երուսաղէմ՝ գործա-կալ վարդապետներուն .— Տպ. Սիօն, 1973:

1738, Ապրիլ 2ին Ս. Զատիկը կը տօնէ Պոլիս, Ս. Գէորգ Եկեղեցին .— Սիօն, 1866, էջ 184:

1738, Օգոստոս 22, Սկիւտարի Երուսաղէմատունը կ'ընդարձակէ եւ մատուռ մըն ալ կ'օծէ յանուն Զերեղեան Ս. Յակոբի .— Շողակաթ, էջ 67:

1739, Յունիս 5, Ս. Յակոբեանց Միարանութիւնը հանրագրութիւն կը գրէ Կ. Պոլիս, խնդրելով որ Աթոռը դարձնեն Շղթայակիր Պատրիարքի հրամանով .— Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Ա. Հատոր, 1966, էջ 464-5:

1739, Յուլիս 3ին Եղիա Վարդ. Կեսարացի կը գրէ թէ, բացի Եկեղեցի-ներէն, 260 խուցեր ծեփած, ճերմկցուցած է Վանքին մէջ, ուր թիզ մը տեղ չէ մնացած որուն դպած չըլլայ չինարար վարպետներուն ճեռքը, Շղթայակիր Պատրիարքի հրամանով .— Յուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Ա. Հատոր, 1966, էջ 464-5:

1739, Դեկտեմբեր 23ին Շղթայակիր կը յաջողի ստանալ նորոգուած Հրովարտակը .— Սաւ. էջ 730: Սիօն, 1866, էջ 186:

1740, Օգոստոս 25ին Ստամբուլէն նաւով ճամբայ կ'ելլէ վերադառնա-լու Երուսաղէմ .— Սիօն, 1866, էջ 187: Սաւ. էջ 732:

1740, Սեպտեմբեր 7ին կը հասնի Յոպապէի նաւահանդիսուը վտանգա-լի նաւարկութիւնէ մը յետոյ .— Սիօն, 1866, էջ 188:

1740, Սեպտեմբեր 15ին կը վերադառնայ Երուսաղէմ . կը գրէ իր ու-ղեւորութեան նկարագրութիւնը .— Տպ. Սիօն, 1866, էջ 122, 141, 184:

1741. Փետրուար 12ին կը կորսնցնէ իր Կ. Պոլսոյ վոխանորդը և թան-կաղին զործակիցը՝ Կոլոս Յովհաննէս Պատրիարքը.— Սաւ. Էջ 737: Շողա-կաթ, էջ 68:

1741, կը նորոգուի Ս. Յակոբեանց Վանքին սեղանատունը.— Սաւ. Էջ 1242: Տրդատ. Վրդ. Պալեան, Սուրբ Երկիր, 1892, Կ. Պոլսո, էջ 134:

1742, կը նորոգուի Ս. Էջմիածին Եկեղեցին.— Սաւ. Էջ 1227-8:

1742, Հոկտեմբեր 26ին նամակ մը կը գրէ Կ. Պոլսոյ Թրանսական գևսպանին, Ս. Յարութեան մէջ պատահած ոտնձգութեանց առընչութեամբ.— Ժոմ. Պատմ. Ս. Երուսաղէմի, Բ. Հատոր, էջ 69-72:

1742, Դեկտեմբեր 10ին բողոքագիր մը կը գրէ Գաղղիոյ Լուղովիկոս թագաւորին.— Տես Պատմ. Երուսաղէմի, Տիգրան Հ. Թ. Մաւալանեանց, 1872, էջ 868-872: Զեռ. Ս. Յ. թիւ 2013:

1743, կը նորոգուի Վանքին արեւմտեան ճակատը. կը շինուի չքեզ ա-ւադ դնուոք, եւ Դարպասատունը՝ սեղանատան վրայ.— Սաւ. Էջ 746:

1744, Այլակերպութեան Տօնին իր սրտագրաւ քարոզով Շղթայակիր զղջումի կը բերէ այն Հայերը որոնք պախարակելի շահասիրութեամբ դաւանա-փոխ կը դառնային.— Սաւ. Էջ 739:

1744, կը շինուին Ս. Յակոբեանց Տաճարի դասերուն երկաթէ դեղա-կերտ վանդակները.— Սաւ. էջ 711:

1745, Հոկտեմբեր 3ին բողոքագիր մը կը գրկէ Արքունի Դրան, տեղա-ցի այլազգիներու անիրաւ արարքներուն դէմ.— Սաւ. Էջ 740:

1748, Յուլիս 28ին Կոնդակ մը կ'ուզզէ Դամասկոսի Հայերուն, յիշե-ցնելով թէ Ս. Աթոռի սեպհականութիւնն են Դամասկոսի Հոգետունն ու Եկե-ղեցին.— Սաւ. էջ 738:

1748, Նոյեմբեր 15ին կը գրէ կարեւոր Կոնդակ մը.— Տես Շողակաթ, էջ 69-74:

1749, Փետրուար 12ին Շղթայակիր Պատրիարքը կը վախճանի Երու-սաղէմի մէջ, եւ կը թաղուի Ս. Փրկչի գաւիթը.— Սաւ. Էջ 740: Միարանք, էջ 85:

Ս. Յակոբեանց Միարանութիւնը սիրով եւ Երախտազիտութեամբ կը յիշատակէ Սրբակրօն Հայրապետին փառապանծ անունը ամէն օր, Տնօրինա-կան Սրբալայրերու մէջ, ի ժամ Ս. Պատարագի:

Ն. ԱՄԲԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ

ՅՆԱԳՈՅՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Նե Բ Ա Շ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ժողովուրդների պատմութիւնն էական նշանակութեամբ՝ հանդիսաւում է նրանց քաղաքակրուրեան ու մշակոյրի զարգացման արտայարութիւնը։ Պատմութեան թատերաբեմից եկած ու անցած ժողովուրդներ այսօր տւելի յաճախ յիշում են ոչ այնքան իրենց ռազմական հզօրութեամբ ու բանակների մեծութեամբ, որքան մարդկութեան մտքին ու հոգեւոր զարգացման մատուցած իրենց ծառայութեամբ։ Ճիշտ է, երբեմն, որ բանակների ու վարչական կուռ կազմակերպութիւնների չնորհիւ անցեալում մի շարք ժողովուրդներ կարողացել են հասնել մեծամեծ յաջողութիւնների։ Բայց դրանք եղել են յազգանցուկ ու չեն կարողացել երաշխաւորել նոյն ժողովուրդների յաւերժացումը։ Նշանակում է, ուրեմն, որ ժողովուրդների ներքին կենսունակուրեան ցուցանիշը ոչ այնքան քանակական ուժի առաւելութեան մէջ է, որքան նրա որակի՝ ստեղծագործական կարողութիւնների մէջ։ Այս է մեղ ապացուցել պատմութեան փորձառութիւնը։ Ով չգիտէ, որ հին Արեւելքի պատմութեան մի շարք մեծանուն ազգեր ու պետութիւններ պատմութեան ռազմարէզից ի սպառանէտացել են այսօր, եւ նրանց ունեցած ռազմական ուժն ու բանակների հզօրութիւնը չեն կարողացել նրանց փրկել անդարձ կորստից։ Բայց ինչոր դարձեալ նրանցից մնում է իրեւել նրանց գոյութեան հետք, որ արժանի լինէր յիշատակութեան, ապահովարար նրանց կատարած աւերածութիւնները եւ մարդկային զանգուածների խենեշային խողիսողումները չեն, որ պատմութեան սեւ ճակատագիրը յօրինեցին, այլ դարձեալ քաղաքակրթութեան (civilisation) ու մշակութային (cultural) այն յիշատակարժան ժառանգութիւնները, որոնք իրեւել ստեղծագործական կեանիքի աւանդները, եկել ու թափանցել են ազգերի քաղաքակրթութեան մէջ եւ նպաստել նրա առաջընթացին։

Այսպիսով, ուսումնասիրել որեւէ ժողովրդի պատմութիւն, նշանակում է առաւելապէս իմանալ նրա քաղաքակրթութեան պատմութիւնը, նրա մտքի նուաճումները, նրա հոգեւոր կեանքի արտազրութիւնները։ Այդ ամէնը միասնարար արտացոլում են նրա ոգու դիմանկարը։ Բայց սա չի նշանակում, որ քաղաքականութեան պատմութիւնը (կառավարական կարգեր, միջազետական յարաբերութիւններ, ներքին հասարակական հակասութիւններ, դաստիարակին պայքարներ, արտաքին պատերազմներ եւ այլն) անջատ ու մեկուսի է տուեալ քաղաքակրթութեան անմիջական ոլորտից։ Ընդհակառակը, քաղաքակրթութիւնը մեծապէս ենթակայ է քաղաքականութեան ազգեցութեան եւ

առաջինի բախտը որոշապէս կախուած է երկրորդի հանգամանքներից եւ հարկատու է դրանց :

Քաղաքականութիւնը ընդհանուր իմաստով, որպէս մի ժողովրդի ըստեղծագործութիւն, գոյութիւն չունի : Զկա՞յ միատարր ու միանոյն քաղաքակրթութիւն : Ժողովուրդների կեանքը միահիւսուած է, եւ նրանք օգտուամ են միմեանց զարգացումից : Ամէն մի ժողովրդի ազգային քաղաքակրթութեանից փոխառեալ տարրեր : Այդ փոխառութիւնների հիման վրայ ստեղծւում ու զարգանում են և փականն ու ինքնուրոյնը եւ տալիս նոր որակ : Այսպիսով, իւրաքանչիւր ազգային քաղաքակրթութիւն պայմանաւորուած է շրջապատող ազգերի եւ կամ մօտիկ ու հեռաւոր ժողովուրդների հետ մշակուած յարաբերութիւններից ու փոխարարձ ներգործութիւններից : Այդ փոխանցիկ ազգեցութիւնները կարող են տեղի ունենալ եւ ուղղակի ճանապարհով եւ միջնորդուած եղանակով եւ կամ խաչաւորմամբ :

Եթէ քաղաքակրթութեան զարգացման ընթացքը նմանեցնենք մի գետի, ապա՝ կը տեսնենք, որ նա իր մէջ ընդունում է տարրեր գետերից թափւող հոսանքներ եւ իր ուղղութեան ընթացքում ճիւղաւորումներ է տալիս ու ստանում շարունակ :

Յայտնի է, որ հին աշխարհում քաղաքակրթութիւն տարածող կենտրոնները եղան Քաղէաստանը (Բարելոն), Եգիպտոսը, Պարսկաստանը, Յունաստանը եւ Հռոմը, որոնց քաղաքակրթութեան ընդհանուր արդիւնքների մէջ նկատելի են որքան ուրոյն առանձնայակութիւններ, նոյնքան եւ փոխարարձ ներգործութիւններ : Բայց Հին Աշխարհի քաղաքակրթութեան սկզբնաւորումը աւելի հեռու է գնում, մինչեւ Հնդկաստան ու Չինաստան աշխարհները, որ մէր թուարկութիւնից 5000 տարի առաջ արգէն ունէին ծաղկած մի քաղաքակրթութիւն, որ վաճառականական ու առեւտրական յարաբերութիւնների շրնորհիւ տարածուեց աշխարհի այլ եւ այլ կողմերում : Այնուհետեւ, իրենց հերթին երեւան են դալիս Բարելոնը, Եգիպտոսը, Ասորեստանը, Պարսկաստանը՝ իրեւ Արեւելքի հնագոյն քաղաքակրթութեան կենտրոններ, որոնցից պիտի տառաջանային Յունաստանն ու Հռոմը :

Դեռեւս ասում է զիտնական Վելս (Wells)- չգիտենք, թէ քաղաքակրթութեան առաջին քայլերը Միջագետքո՞ւմ տեղի ունեցան, թէ Եգիպտոսում : Ամենայն հաւանականութեամբ կարող է երկար ժամանակուայ ընթացքում մի քաղաքակրթութիւն ծագում առած լինել Միջագետքում, առանց որևէ կապ ու յարաբերութիւն ունենալու այն քաղաքակրթութեան հետ, որ զուղահեռարար առաջադիմում էր Եգիպտոսում : Եւ նոյնպէս կարող է պատահել, որ այս երկու քաղաքակրթութիւններն էլ ունեցել են մի ընդհանուր օրան Միջերկրականի, Կարմիր ծովի եւ կամ հարաւային Արարիայի մի որեւէ տեղում* :

Բայց այս երկու հնագոյն քաղաքակրթութիւնների միջեւ շեշտում են այն տարրերութիւնները, որ Միջագետքում առաջացած քաղաքակրթութիւնը աւելի գործնական ու իրապաշտ հետաքրքրութիւնների արտայայտութիւն էր, աւելի աշխարհային խնդիրներով էր զրագոււած, մինչդեռ նկատում է, որ Եգիպտոսիները զարգացել են վերացական միստիկական ժամանողութեան մէջ ու տարուել հանդերձեալ կեանքի հարցերով : Հետեւարար՝ մէկը զարգա-

* H. G. Wells, *Esquisse de l'Histoire universelle*, p. 72-73 :

ցըրել է գործնական գիտութիւններ՝ արհեստներ, առեւտուր, աշխատանքային գործիքներ եւ այլն, իսկ միւսը՝ փիլիսոփայական, բարոյական ու տեսական խնդիրներ։ Այսուհետեւ, երեւան են զալիս Ասորեստանցիները, որոնք ի տարրերութիւն նախորդներին, աչքի են ընկնում զինուորական ու ռազմական ուժի մէջ։ Եւ ահա Բարելական ու Եղիպատական քաղաքակրթութիւնները միախառնուում են իրար, որոնց հետ, աւելի յետոյ, չփուում են Հիւքոսներ, Սիրիացիներ, Հրեաներ եւ Փիւնիկեցիներ ու միաձուլուում մէկ քաղաքակրթութեան մէջ։ Այդ քաղաքակրթութեան տարածման մէջ մեծ դեր են կատարում Փիւնիկեցի ծովաղնաց առևտրականներ, որոնք Միջերկրականի ափերին սփոռուած ծովածողովուրդներին տանուում ու հաղորդուում են Արեւելքի գիտութիւնն ու արւեստները։ Արեւելքի քաղաքակրթութեան նուաճումները, ահա, այդ երկրների միջոցով էլ անցնուում են Յունական գաղութներ եւ ապա՝ Յունաստան։ Այսուհետեւ զալիս է Պարսկաստանը, տարածուում Եզիզոտոսից մինչեւ Փոքր Ասիայի երկրները ու մինչեւ Հեռաւոր Հնդկաստան եւ իր աշխարհակալութեան տակ միացնուում տարբեր աշխարհամասներ ու երկրներ եւ միաձուլուում նրանց քաղաքակրթութեան նուաճումները։ Պարսկական թագաւորները իրենց զրաւած երկրների գիտութեան ու արուեստի լաւագոյն տարբերը բերուում էին իրենց արքունիքը եւ օպտագործուում իրենց քաղաքականութեան աղղեցութեան տարածման համար։

Այսպիսով, իւրաքանչիւր ժողովուրդ զարգացման ինչպիսի մակարդակի վրայ էլ կանգնած է եղել, միշտ ձգտել է ունենալ իր ինքնուրոյն քաղաքակրթութիւնն ու մշակոյթը։ Իսկ եթէ անզօր է եղել ստեղծելու իր սեփականը՝ ապա այն փոխ է առել եւ կամ սովորել ուրիշներից։ Որովհետեւ, ստեղծել քաղաքակրթութիւն, նշանակուում է ինքնուրոյն դառնալ, հզօրանալ ու ձերբազատուել կործանարար հպատակութիւնից։ Նշանակուում է՝ ազատազրուել ու անկախանալ, պատեհչուել ձուլման ու այլասերումի վտանգների դէմ։ Հետեւարար նշանակուում է, վերջապէս ձեւ ու կերպարանի տալ ոգու պատկերին և յաւերժացուումի կոչել ներքին կենսունակութեան ընդերկրեայ ուժերը։

Ամէն մի ժողովրդի քաղաքակրթութիւն, նրա ապրելու եւ ստեղծագործելու ընդունակութեան չափանիշն է՝ Հետեւարար, այդ ընդունակութիւններից, համեմատական չափակցութեամբ՝ նուազ օժտուածներն են, որ վախենալով ապրելու պայքարից եւ յենուելով իրենց թուական գերակշռութեան ու քանակական առաւելութեան բիրտ ուժի վրայ՝ ոչնչացնուում են միւններին։ Ահա թէ ինչո՞ւ 20րդ դարը, որ համարեւում է աշխարհի ու մարդկութեան ամենաքաղաքակիրթ ժամանակը, իր ծոցուում յզացաւ ամենաճիւտաղային ոճրազործութիւնը՝ ցեղասպանութիւնը։ Բայց ցեղասպանութիւնը քաղաքակրթ ժամանակներում, ըստ էութեան ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ քաղաքակրթութեան մրցագաչտում անզօրների սարսափը հզօր ախոյնանից, ստեղծազործելու եւ արգասաւորելու ապիկարութեան խուլ նախանձը՝ զարդանալու ու առաջադիմելու բեզուն կարողութիւնների հանդէպ, եւ վերջապէս՝ կեանքի պայքարում մահապարտների քէնն ու ատելութիւնը՝ ապրելու խանդավառութեամբ տողորուածների նկատմամբ։

Ահա, Հայ ժողովրդի կեանքը սկզբից եւեթ քաղաքակրթութեան ջահակրի մի զեղեցիկ օրինակ է եղել։ Նրա արժէքը համաշխարհային մասշտապների յարաբերական մեծութեամբ չի որոշուում, թէեւ անցեալի դարաշրջաններում մեծագոյնների կողքին նա կանգնած է եղել հաւասարապէս։ Այս իմաստով, ուշագրաւ է Քեմպըինի համալսարանի մարդաբանութեան ու հնագիտութեան ուսուցչապետ Պրոֆ. Հետընի յայտարարութիւնը, երբ առում է. «Հա-

յերը հպարտ զգալու որքան իրաւունք ունեն, եթէ իմանան, թէ ինչ փառաւոր անցեալ են ունեցել, բայց չդիտեն դժբախտաբար» : Եւ իրօք, աշխարհի այն բոլոր նշանաւոր մարդիկ, որոնք առիթ են ունեցել խօսելու կամ արտայայտուելու Հայ ժողովրդի մասին, առաւելապէս չեշտել են նրա քաղաքակրթութեան ընդունակութիւնները : Իսկ եթէ Հայ ժողովուրդը իր կամքից անկախ պատմական ու քաղաքական գժրախտ հանգամանքների բերումով չի կարողացել լիապէս արգասաւորել իր կարողութիւնները ու համաշխարհային տարողութեամբ նուածումներ արձանագրել, ապա՝ միշտ էլ գտնուել է քաղաքակրթ ժողովուրդների առաջաւոր շարքերում :

Այս իմաստով, ուսումնասիրել Հայ ժողովրդին քաղաքակրթութիւնը, նշանակում է որոշ տեսակէտից ուսումնասիրել առաջաւոր Ասիայի եւ կովկասեան ժողովուրդների պատմութիւնը : Հայաստանն իր աշխարհագրական դիրքով Ասիայի ու Եւրոպայի ճանապարհների վրայ կանգնած՝ պատմական բոլոր ժամանակներում քաղաքակրթութեան մեծագոյն սկզբունքների՝ հայրենիքի անկախութեան, ժողովուրդների ազատութեան ու մարդկային խաղաղ յարաբերութիւնների ու գոյակցութեան կենտրոնն հանդիսացաւ : Իսկ Հայերը բնականից ժիր ու ճարպիկ ժողովուրդ՝ աշխատասիրութեամբ ու գործարարութեամբ կարողացան հնագոյն դարերում իրենց առջեւ բաց անել առեւտրական հեռաւոր ճանապարհներ ու մրցակցութեան մէջ մտնել Փինհիկեցիների, Ասորեստանցիների, Քաղդէտցիների եւ Հրեաների հետ : Եւ ապա՝ Ասիայի ու Եւրոպայի յարաբերութիւնների միջնորդներ հանդիսացան :

Իսկ ինչ վերաբերում է մեր թուարկութիւնից առաջ Պարթես-Հռոմ կատաղի մրցակցութիւնների ժամանակաշրջաններին, ապա նրանցից իւրաքանչիւրը հաշուի էր նստում Հայաստանի հետ : Որովհետեւ յաղթանակը շահում էր նաև, ով կարողանում էր Հայաստանն ունենալ իր կողմը :

* * *

Սոյն ուսումնասիրութիւնը մի փորձ է (essai) Հայ քնթերցողին ներկայացնելու Հայաստանի քաղաքակրթութեան նախապատմութիւնը : Հայ ժողովուրդը որպէս Արեւելքի հնագոյն ժողովուրդներից մէկը, ապրելով իր ժամանակաշրջանի մեծագոյն տէրութիւնների կողքին եւ յարաբերուելով նրանց հետ՝ միաժամանակ ստեղծել է նաև իր սեփական քաղաքակրթութիւնը եւ ունեցել մշակութային ինքնուրոյն կեանք :

Այս ուսումնասիրութեան նպատակն է, ի հարկէ, տայ մեր նախահայրենիքի քաղաքակրթութեան պատմութիւնը : Բայց դա հնարաւոր չէ առանց Հայուի առնելու մեր երկրի ցեղագրական, ազգաբանական, պետական ու քաղաքական պատմութիւնը : Այս տեսակէտից ազգաբանական ու ցեղագրական պատմութիւնը օգտագործւում է որպէս գետիմ կամ ենթակա քաղաքակրթութեան պատմութեան :

Այս առիթով անհրաժեշտ ենք համարել մեր գործն սկսել Հայկական բարձրաւանդակի առաւել հնագոյն ցեղերի ուսումնասիրութեամբ, որ նախորդել են Նեայիրի-Ռւրաբատական ցեղերին : Այդ առիթով Հարկ է եղել այդ նախապատմական ժամանակաշրջանի մասին յայտնուած բազմաթիւ խառնակ ու խառնափնորդ կարծիքների, իրարամերժ ու հակասական տեսութիւնների մէջ վիճուել ու գտնել առաւել ճշմարիտ ու հաւանական թուացող տեսակէտները, ընտրել ու զատորոչել առաւել համոզէեր փաստերը, ըստ հնարաւորին ճշդրելու համար առաջաւոր Ասիայում ապրող բազմաթիւ ու այլազան ցեղերի մէջ

Հայկական բարձրաւանդակում ապրող ցեղերին ու նախարնիկներին ու պարզել նրանց կազն ու առնչութիւնները շրջապատող ցեղերի ու ժողովուրդների հետ :

Հայկական բարձրաւանդակի նախապատմական բնակեչների ու ցեղերի մասին յայտնուած բազմաթիւ հեղինակաւոր կարծիքների մէջ մէնք համաձայն չենք, օրինակի համար, նախա-Հայաստանի հիմնական բնակիչները բնուածներու Սուրարիներին, Հուրբիներին կամ Խարբի-Միտանիներին կամ աւելի ճիշտ՝ նրանց համարելու բնակչութեան գերակշիռ տարրեր : Մէնք հակուած ենք նրանց ընդունելու Հայաստանում ապրող գաղութներ կամ Հայաստանի բրնձակչուրեան բաղկացուցիչ մասեր, որ պատմութեան տարրեր ժամանակներում երեւացել ու ապրել են Հայաստանի տարրեր երկրամասերի ու սահմանամերի գոտիների վրայ, բայց ոչ ամբողջութեամբ Հայկական լեռնաշխարհում : Այսպիսով, մեղ աւելի հաւանական ու համոզեցուցիչ թուացող փաստը եղել է այն, որ նախա-Հայաստանի բնակչութիւնը մեծ մասամբ կազմուած է եղել Հիմներից (Խեթերից, Խաթերից, Հաթերից), եւ կամ այդ Հիթիթական ցեղերի ճիւղերն են եղել նախապատմական Հայաստանի հիմնական բնակչութիւնը կամ ժողովրդախաւուր : Եւ հետեւաբար՝ հետագայում, Նայիրի-Ռուարտական ցեղերը ո՛չ թէ Սուրարիներին կամ Խարբի-Միտանիներին ցեղերի ժառանգուրներն են եղել, այլ ուղղակի Հիթիթական (կամ Հաթեան) ցեղերի հետնորդներ, որ իրենց նշանաւոր նախնիների հետ կապւում են մարդարանական, ցեղագրական նմանութիւններով, ինչպէս նաև՝ քաղաքակրթութեան ու մշակութային ժառանգութիւնների տուեալներով :

Հայկական բարձրաւանգակը, ուր տարածւում էր Հիթիթական աշխարհի արեւմտեան թերեւ իրեւ նրա մերձաւորագոյն երկրամասը, հիմնական բնակչուրեան գերակշիռ խաւը կազմում էին Հիթիթները, որոնց համեմատութեամբ երկրորդ հազարամեակում Սուրարիները եւ ապա՝ նրանցից յետոյ Խարբի-Միտանիները, որոնք թէեւ մտնում ու բնակութիւն են հաստատում Հայաստանի որոշ երկրամասերում, բայց հիմնական բնակչուրեան տեսակետից դաստիարակում են զաղութներ ու զաղութափայրեր : Այսպիսով, մենք Պրոֆ. Խառարեանի եւ նրա հետեւորդների պատմական տեսութեան ճիշտ հակառակ ծայրից ենք զալիս : Հիթիթներին ընդունում ենք ոչ թէ «Նախա-Հայաստանի բնակչութեան բազկացուցիչ մաս», այլ ընդհակառակը, Սուրարիներին ու Խարբի-Միտանիներին ենք համարում Հայաստանի բնակչութեան բազկացուցիչ մաս, իմանական բնակչութեան իրաւունքը գիծելով Հիթիթներին :

Ո՞ւր կարող էր հասնել հաշիւը, եթէ Հայաստան մտած ելած ամէն մի այլածին ցեղ կամ ժողովուրդ, որ յաճախ իշխանութիւն էլ է հաստատած եղել, Հայաստանի վրայ բազմէր հիմնական բնակչի կամ բնիկ ժողովրդի հանդամանքով : Դարերի ընթացքում մտել է Պարսիկը, Արարը, Սելձուկը, Թաթարը, Թուրքը եւ այն, հաստատուել ու երկար ժամանակ իշխանութիւն էլ է հիմնել եւ իր օտար անունսով էլ մկրտել է Հայկական զաւառներն ու զիւղերը, եւ որոնք մինչեւ վերջին ժամանակներու էլ գործածութեան մէջ էին, որպէս «Հին ողբ մէր ականջին», որպէս «Վէրքեր մեր պատմութեան» եւ կամ որպէս «Ճիշտարաւիս ծաղը ու ծանակ», ինչպէս կ'ասէր բանաստեղծը, Թուարկելով «Ուլիխանլու», «Ղոնաղ զռան», «Մորա Մուսա», «Ճօլո խան», «Տաւշան ղջաղղ», «Քաւթառլի» որպէս տիսուր վկաներ մեր տիսուր անցեալից : Բայց ո՛չ ոք չի կարող մտքից անցկացնել, որ Հայաստանի բնիկներ կամ հիմնական բնակիչներ են եղել այդ օտար անունների օտար տէրերը : Օրինակի շրջանակը աւելի սեղմելով՝ միեւնոյն երեւոյթը տարածուած ենք զանում քաղաքների վրայ, երբ յա-

ճախ մի քաղաքում տարրեր թաղեր կամ թաղաժամակեր կոչվում են իրենց տեսակաւորուած տարրեր բնակչութեան անուններով, ինչպէս օրինակ՝ «Թուրքի թաղ», «Հրեաների թաղ», «Ասորիների թաղ», եւ այլն, եւ այլն։ Նոյնպէս մի-եւնոյն երեւոյթը կայ եւ այսօր։ Թիֆլիսում, Բաքում, Սեւ Շովի արեւելեան ափերում բազմաթիւ Հայ վերաբնակիչներ կան։ Նոյնպէս եւ Ֆրանսիացի ժողովրդից հակայական թուի հասնող բնակչութիւն ունի Ալֆիրը, Կանագան, ուր նրանք ապրում են իրենց ազգային սովորութիւններով, անուններով, կրօնքով ու ծէսներով եւ ունեն իրենց ազգային անուններով կնքած թաղեր եւ նոյնիսկ քաղաքներ։ Բայց ոչ ոք ի հարկէ, Ֆրանսիացիներին չի կարող այդ երկրի ըր-նիկներ համարել։

Ճիշտ միեւնոյն յարաբերութեամբ էլ նախ-Ասիայի Սուրարիներն ու-նէին իրենց մայր Հայրենիքն ու պետական կենարոնատեղին, ինչպէս տեսանք։ Բայց դրանցից գուրա իրենց ենթակայ երկրները համարուում են ազդեցութեան շրջանակներ եւ կամ գաղութիւններ, ուր տարածուելով բնակութիւն են հաստատել։ Նմանապէս Հուրրիները կամ Խարրի-Միտանիները հաստատուելով Սու-րարի երկրի ու պետութեան վրայ, Հիմնում են իրենց պետութիւնը, իրենց գե-րիշխանութեան տակ առնելով նախորդներին ենթարկուած երկրամասերն ու սահմանները։ Նրանք իրենց բուն բնակավայրէն դուրս, ինչպէս Արմենիա-յում, այնպէս եւ այլուր, ապրել են որպէս դպիցիներ, զրոխ եկած զաղութ-ներ մինչեւ իրենց իշխանութեան կործանումը, երբ իրենք էլ իրենց Հերթին զրկուելով տիրապետող դիրքերից՝ հետազարում ձուլում ու խառնում են տեղի բնակչութեան հետ, պատմութեան աւանդելով իրեւ իրենց գոյութեան հետքեր՝ աշխարհագրական տեղանուններ, նախարարական տներ, լեզուական բառամթերք եւ այլն։ Նրանք աւելի յաճախ առաջանում են փոխազարձ շփում-ներից ու յարաբերութիւններից, քան թէ գերիշխող դիրքերի ազդեցութիւնից։

Միւս կողմից՝ «Հայասայիշ» եւ «Հայասացիների» հարցը չափազանց մշուշապատ ու անորոշ խնդիր ենք Համարում։ Այս ուղղութեամբ պատմա-գիրների թափած ջանքերը խիստ գնահատելի համարելով հանդերձ զեռեւս դանում ենք, որ Համոզեցուցիչ չեն։ Այս առթիւ պատմական տուեալները թոյլ ու մակերեսային են եւ մեծ մասամբ՝ Հակասական։ Մանաւանդ, երբ աշխատում են «Հայ» եւ «Հայաստան» անունը բինեցնել «Հայաս» բառից, որ գալիս ու կորչում է Հակասութիւնների փակուղիում։ Մեր կարծիքով, առ այ-ժք ամենահաւասարի ապրիւրը այդ բառի ստուգաբանութեան համար մնում է Հնդեւրոպական Արմէնների լեզուն։

Ամէն մի գրական երկ կամ ուսումնասիրութիւն արդիւնք է մասնաւոր սիրոյ ու ոգեւորութեան։ Ամէն մի մարդ պարտաւոր է սիրել իր ժողովուրդը, իմանալ ու ճանաչել ինչպէս նրաներկան, այնպէս եւ անցեալը։ Բայց դիտական գործը պահանջում է նաեւ ճշմարտասիրութիւն, փաստերի անկողմ-նակալ քննութիւն ու դէպքերի անաշառ զատավարութիւն։ Ու մենք էլ Համոզ-ւած լինելով Ֆրանսիացի պատմաբան ֆուլանժի հետ՝ կը Գուլանժի հետ՝ կը կըրկ-նենք նրա զատողութիւնը։

«Պատմութիւնը գիտութիւն է,

Հայրենասիրութիւնը՝ առաքինութիւն։

Այս երկուսը պէտք չէ շփոթել իրար հետ։

Գէլլրդ. ՀԱՏԻՏԵԱՆ

(Դար. 1)

ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ

Հայ պատմագրութիւնը իր փաստագրական եւ ճանաչողական բացառիկ նշանակութեան չնորհիւ վաղուց է գիտական հետաքրքրութեան արժանացել ոչ միայն հայ իրականութեան մէջ: Օտար հայագէտների հետազոտական աշխատանքները իրենց բազմազան բնոյթով, ծաւալով ու գիտական յաղեցւածութեամբ անպայման լուրջ ներդրում են ընդհանրապէս հայագիտութեան և ժամանակուրարար հայ պատմագրութեան ուսումնասիրութեան ասսպարէզում: Հայ բոլոր ականաւոր պատմիչների երկերը թարգմանուած են երբեմն մի քանի օտար լեզուների եւ արժանացած պատմա-բանասիրական, աղբիւրագիտական, ընագրագիտական եւ լեզուազիտական քննութեան: Ոչ միայն հայագիտութեան, այլիւ արեւելագիտութեան տեսանկիւնից բարձր է գնահատուած գրանց խոչոր նպաստը մանաւանդ Հայաստանի եւ Հարեւան երկրների պատմաբանական, իրաւական եւ մշակութային կեանքի ուսումնասիրութեան համար:

Այս առումով Ռոբերտ Թոմսոնի Հայագիտական դործունէութիւնը և բոլոր աշխատանքների աշխատանքների բնական շարունակութիւնն է, եւ, բարերախտարար, ոչ միայն բնոյթով ու նպատակով, այլ խորքով ու տարողութեամբ: Նա բոլորովին էլ նոր անուն չէ: Տարիներից ի վեր հայագիտութիւն է ուսուցանում Հարվրատի Համալսարանում, զիտական սերտ յարաբերութիւններ է պահպանում Հայաստանի Համապատասխան գիտնականների հետ, քանից այցելել է Հայաստան, անշուշտ, զիտական նկատառումներով: Այսքանը չէր կարող իր բարերար դերը չկատարել:

Ու. Թոմսոնի առաջին հայագիտական Համեմատարար ծաւալուն ուսումնասիրութիւնը նուիրուած է Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»ին մաս կազմող «Վարդապետութիւն» Սրբոյն Գրիգորի բաւականին ծաւալուն րնադրին, նրա պատմա-բանասիրական քննութեանն ու անդլերէն թարգմանութիւնը¹: Աւելի քան երկու Հարիւր մեծադիր էջերից բաղկացած սոյն հետադուսութիւնը անկանկած զիտական լուրջ զնահատանքի է արժանի յոտակ ու ճրչորիս թարգմանութեան, քրտնաջան եւ հմտալից աշխատանքի արդինք՝ բնդարձակ ներածութեան, բազմաթիւ զիտական ծանօթագրութիւնների ու բայատրութիւնների համար: Եշուած բնագրի անդլերէն թարգմանութիւնը ներ-

¹ The Teaching of Saint Gregory, an early Armenian catechism, translation and commentary by Robert W. Thomson, Harvard University press, Cambridge, Massachusetts, 1970.

Ու. Թոմսոնի գրչին է պատկանում նաև գրաքարի մի ենթականութիւն՝ An introduction to classical Armenian (Delmar — New York, 1975), որի մասնագիտական բննութիւնը կը բոլունի լեզուարաններին:

կայացուած է հատուած առ հատուած եւ անմիջապէս տրուած են իւրաքանչիւր հատուածին առնչուող անհրաժեշտ պարզաբանումները, աղբիւրագիտական երրեմն նոր ճշգուած յլումները, կարեւոր բառերի ու բառակապակցութիւնները կրօնա-աստուածարանական, դաւանաբանական, բնագրադիտական եւ լեզուադիտական «լուծմունք»ները։ Անտարակոյս զրական նշանակալից իրողութիւն է, որ նման մանրախնդիր հնտահօտական քննութեամբ անդիւախօս ընթերցողին առաջին անգամ ներկայացւում է Հայ եւ արեւելեան քրիստոնէական զրականութեան վազ Միջնադարի ուշադրաւ բեկորներից մէկը՝ այսքան օգտակար զիտական մէջոցներով։ Կրօնագիտական եւ աղբիւրագիտական լրացուցիչ բացայալումներն ու աղբիւրագիտական ճշգրտումները բարենպաստ ծառայութիւններ, են մատուցում նաև նեղ մասնագէտներին։

Սակայն, անտարակոյս, Հայագիտական աւելի լուրջ եւ աւելի լիարժէք ուսումնասիրութիւն է մ. Թոմասնի երկրորդ ծաւալուն աշխատութիւնը։ Աղաթանակեղոսի «Պատմութիւն Հայոց»ի անգլերէն առաջին թարգմանութիւնը՝ գարձեալ բնդարձակ ներածականով եւ հարուստ ծանօթագրութիւններով հանդերձ։ Հայերէն բնագրի զուղահեռ հրատարակութիւնների (յունարէն, արաբերէն) առնչութիւններն ու տարբերութիւնները հայերէն պահպանուած բնագրի համեմատութեամբ, վերստին, երբեմն նոր ի նորոյ անդրադառնալ բանասիրական բազմաթիւ մեծ ու փոքր խնդիրների, աւելի սոսոյց եւ լայն կարելիութիւն ընծայել մասնաւուրար Արեւմուտքի հայագէտներին, իրենց հետագայ գիտական զործունէութեան համար ստեղծելով աւելի եւս ընդարձակ տեսակաշտ։ Հեղինակը յայտնի է, որ ի մտի ունի նաև ո՛չ նեղ մասնագէտներին, որպէսզի իր սոյն ուսումնասիրութիւնը օժանդակի նրանց՝ աւելի յստակ պատճերացում եւ խմացութիւն ունենալու քրիստոնէութեան ի Հայաստան մուտքի, Դ.-Ե. գարերում Հայաստանի քաղաքական, աղդային, կրօնական, գրական եւ մշակութային պարմանների ու երեւոյթների մասին։ Այս բոլորը, բնական է, ոչ բացառապէս Աղաթանակեղոսի երկի տուեալների, այլ բազմաթիւ յարակից խնդիրների քննութեան եւ իր կողմից տրուած պարզաբանումների ու եղբայանդումների հիման վրայ։ Այս տեսանկիւնից մ. Թոմասնի սոյն երկասիրութեան նախարանն ու ներածութիւնը, որոնք չուրջ հարիւր էջերից բազկացած մի առանձին ուսումնասիրութիւն կարող են նկատուել, բաւարար կը լինեն դոհացնելու անգամ ամենախօսապահանջնեղ մասնագէտին, ի հարկէ, իրենց ընդգրկած հարցերի ու Հարցադրումների սահմաններում։ Եւ երբ զրանց վրայ գումարելու լինենք ծաւալով եւ կշոռվ ոչ նուազ ծանօթագրութիւնները, վատահ ենք, որ առաւել երաշխաւորուած կը լինի ընթերցողի համոզումը, թէ ինքն իրօք ձեռքի տակ ունի զիտական միանդամայն հմտալից մի երկասիրութիւն։

Առաջարանի եւ ներածութեան մէջ առաւել ուշագրաւը հանրագումարի բերուած այն արդիւնքներն են, որոնք գոյացած են Հայերէն 1909 թ. հրա-

² Agathangelos, *History of the Armenians, translation and commentary by R. H. Thomson, Albany, State University of New York press, 1976.*

տարակուած քննական բնազրի եւ տարրալեզու խմբագրութիւնների մանրակըրկիտ համեմատութեամբ, բնական է, նկատի ունենարով նաեւ այլոց նախրնթաց նման աշխատանքները։ Այս ուղղութեամբ թափուած ջանքերը իրենց անառարկելի նպաստը բերում են աւելի պարզորոշ տեսնելու յիշեալ խմբագրութիւնների բնդհանրութիւններն ու չեղումները, ինչպէս նաեւ առկայ հայերէն բնագրի կազմութեան եւ կրած փոփոխութիւնների բնթացքը։ Ինչպէս յայտնի է, սոյն խմբագրութիւնների մէջ երբեմն պակասում են հատուածներ, դրուագներ, երբեմն էլ ոչ նոյն մանրամասնութեամբ են դրանք արևում։ Ռ. Թոմսոնը անդրադառնում է դրանց, թէկուզ ոչ միշտ առաջին անգամ լինելով, եւ օգտակար գործ կատարում, քանի որ անգլերէն թարգմանութիւնը հայերէն բնագրի հետ ներկայացնում էր առաջին անգամ իր կողմից, ուստի, անհրաժեշտ էր, որ նման համեմատական աշխատանքի արդիւնքները երեւային։

Կարծում ենք ճիշտ է վարուել, որ համառօտակին ներկայացրել է Աղաթանողեղոսի երկի բովանդակութիւնը, մանաւանդ որ մէջ ընդ մէջ շարունակել է աշխատանք տանել նաեւ բանասիրութեան եւ աղբիւրադիտութեան տեսանկիւնից, վերծանելով յատկապէս միւս պատմիշների երկերի հետ ունեցած առնչութիւնները։ Կանխենք ասել, որ այս առիթով արուած ոչ բոլոր հետեւթիւններին ու եղբակացութիւններին կարելի է համաձայնել, որոնցից միւրկուսի մասին ակնարկ կը լինի ստորեւ։

Կարելի չէ չնել Ռ. Թոմսոնի հանգամանալից ծանօթութիւնը Հայ մատենագրութեան հնագոյն աղբիւրներին, որոնք այս կամ այն կերպ առնչում են Աղաթանողեղոսի երկի բնագրին, պատմուող իրագարձութիւնների ինչինչ մանրամասներին եւ այդ կապակցութեամբ հայոցիտութեան մէջ եղած քննական խօսքին։ Նա աչքի առաջ ունի հայերէն եւ այլալեզու մեծ ու փոքր ուսումնասիրութիւններն անխսիր, անչուշտ, մասնաւորաբար Աղաթանողեղոսադիտութեան մէջ որոշակի վաստակ ունեցող մասնագէտների՝ Բ. Սարգսեանի, Յ. Տաշեանի, Ն. Մառի, Գ. Տէր-Մկրտչեանի, Գ. Գարիսի, Շ. Թումանովի, Փ. Տէր Ղեւոնդեանի հետազօտութիւնները։ Միաժամանակ հարել է նըշել, որ հմտալից եւ քննական համարձակ վերաբերմունք է ցոյց տալիս բոլորի հանդէպ, նոյնիսկ անառարկելի համարուած որոշ եղբակացութիւնների, թէպէտեւ, մեր կարծիքով, ոչ միշտ իրաւացի։

Կ'ուղենայինք նշել միւրկու կէտ, որոնց վերաբերեալ, կարծում ենք, սխալ եղբակացութիւն է կացուցուած։ Օրինակ, բոլորովին անհիմն եւ անտեղի փորձ է արուած մի անգամ եւս Մ. Խորենացին եւ Եղիշէն տեղաշարժելու Յ. դարէն Բ. եւ Զ. դարեր³։ Բայ այդմ էլ՝ իրը թէ Եղիշէն Փարագեցուց յիտոյ է եւ նա է օգտուել վերջինիս երկից⁴։ Ճիշդ չէ, որ Շապուհի որդին քանիցս կոչուել է նարսէս⁵, այլ ներսէն։

Կարծում ենք զոհացուցիչ չեն որոշ հատուածների թարգմանութիւնները, այդ թւում՝ հետեւեալները։

³ Անդ, էջ XV, XCIV-XCV, 451, LXXXVII, 450։

⁴ Անդ, էջ 450։

⁵ Անդ, էջ XXXV։

«Մէտ ի մէտ խոնարհին, բայ
աղեգէտն պատմողին մարմնա-
թնար Դաւթեան երգոյն . . .»⁶:

«Զի քէպէտ եւ տեսամիցեն
գրլունութին սաստկութեան հոդ-
մակուծեալ ալեացն տատանելոց,
որ յերփն երփն զերանզսն շրջըր-
ջեն բայ սաստկութեան ծփանա-
ցըն, դիզադէզ յեղեղուկ փրփը-
րացեալ զմիմեանց կարգեալ զկնի
տողիցին, եւ յափնածիր յաւազա-
դիր սահմանս բարձրացելոցն
ընդդէմ հասեալ ի ցամաքակէտն
ծիծաղեսցին»⁷:

Մեր կարծիքով ճիշտ չէ նաեւ այն, որ «Վարդապետութիւն Սրբոյն
Դրիդորի» ընդարձակ մասը, որը սկզբից եւեթ հրատարակուող բնադրի մէջ է
բնդգրկուած եղել, դուրս է թողնուած: Մանաւանդ գիտական—տկադեմիական
նման մի հրատարակութեան պարագային, եթէ անզամ նախապէս այն թարգ-
մանարար առանձինն հրատարակուել է Ռ. Թոմասոնի իսկ կողմից. ամբողջա-
կան մայր բնագրից այդպէս դուրս թողնելը որեւէ լուրջ պատճառարանու-
թիւն չունի, մանաւանդ որ անդլերէնի հետ հայերէն զուզահեռը չէ տրուած
տուեալ դէպքում:


Անձնանունների եւ տեղանունների համապատասխան ցանկերի պա-
կասը այսօրինակ մի հրատարակութեան մէջ խիստ զզալի է եւ չունի իր արդա-
րացումը:

Այդուհանդերձ, Ռ. Թոմասոնի այս վերջին ուսումնասիրութիւնը՝ Ա-
ղաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»ի առաջին անդլերէն թարգմանութեան եւ
հայերէն բնագրի զուզահետ հրատարակութիւնը գիտական միանդամայն կարե-
ւոր ներդրում է հայագիտութեան մէջ:

ՓԱՅԼԱԿԻ ԱՆԹԱՊԵԱՆ

⁶ Անդ, էջ 2, 3:

⁷ Անդ, էջ 4, 5:



ԱՅԱԿՈՒԻ

* Ուր 1 Ապրիլ.—Խ. օր Մեծ Պահոց : Առաւտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցան Մեծ Պահոց Արեւագալի վերջին, իսկ կէսօրէ Ետք՝ «Խաղաղական»ի ժամերգութիւնները :

* Եր. 2 Ասպիլ.— Յիշատակ յարութեան Ղազարու : Ս. Պատարագը ժառացուեցաւ Ս. Գիշաղիքը : Ժամարաբն էր Հոգ : Տ. Ասպետ Արդ. Պայեան :

— Վազուան Մազկազարդի տօնին առիթով, կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք
Ա. Հօր զիխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց
Ո. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն ու նախատօնակ՝
մէր զիերնամատուին մէջ։ Ազա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու
այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգ։
Տ. Հայկագուն Արդ. Մելգոնեան։

* Կիր. 3 Ապրիլ.— Մաղկազարդ։ Գիշերային եւ առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուաբն մէջ։ Ժամարարն էր Հոգէ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուարարեան։ Ապա, Գերէ. Տ. Շահէ Արքեպս. Աձէմեանի գլխաւորութեամբ կատարուեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղիին շուրջ, որու ընթացքին կատարուեցաւ նաև «Անդաստան»։ Թափօրականներ մեռքերնուն ունէին ձիթենիի եւ արմաւենիի ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Դատիններ եւ Ասորիններ։ Ժամը 1ին, Վանք գարձին, Միարանութիւնը «Որ զխորհուրդ քո զալստեան» շարականը երգելով Հայոց թաղի մուտքէն յառաջացաւ ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ն. Ամեն. Պատրիարք Հայրը «Պահապանիչ» օրհնեց ու արձակեց ժողովուրդը։

— Կէսօրէ ևտք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախ «Ալղաստան», յետոյ տօնին յատուկ հոգեգմայլ շարականներով ընդմիջուած երեկոյեան ժամերգութիւն, ապա Գոնքացէի սրտազգաւ արարողութիւնը, նախազահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի: Հոգչ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան Աւագ Սեղանի բնմէն կարդաց անոււանացանկը «Հոգեւոր սիրով եւ փափաքով» վարագոյր բացող տեղացի եւ ուխտաւոր բարեպաշտներուն եւ կոչ ըրաւ որ արարողութեան աւարտին ներկաները իրենց լումաներէն բաժին հանեն Լիբանանի Ազունիէի Ազգ. բուժարանին: Այդ նպատակաւ պնակներ դրուած էին Տաճարի ոռու մուտքեռուն:

* Պ. 5 Ապրիլ.—Աւագ նրբէշաքրի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն Տաճարի ուստիթիկն արեւելակողմը գտնուող Ա. Յովհաննէս Աւե-

տարանիշի մատուիին մէջ։ Ժամարարն էր Հոգէ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան։ Ա. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի ուսանողութիւնը Ա. Հազորդութիւն ստացաւ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու այցելութեան թափօր Տաճարէն ներս, որու ընթացքին թափօրապետ Հոգէ. Տ. Ասպետ Արդ. Պալեան բացատրութիւններ տուաւ ուխտաւորներուն։ Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Հոգէ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան։

* Եշ. 7 Ապրիլ. — Աւագ Հինգշաբրի (Յիշատակ Ընթագման)։ Առաւոտեան ժամերութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ապաշխարողաց» կարգէն ժամ մը ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Ասլանեան մատոյց օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Աւագ Սեղանին վրայ, որուն ընթացքին բազմաթիւ հաւատացեալներ Ա. Հազորդութիւն ստացան։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Ամեն. Պատրիարք Ա. Հօր Նախապահութեամբ կատարուեցաւ «Ռունալուայի» արարողութիւն։ Եկեղեցին զոյդ դաւերը դրաւած էին Եւրոպացի հիւրեր եւ պետական դէմքեր, որոնց շարքին Քաղաքապետի փոխանորդը եւ Անկլիքան Արքեպիսկոպոսը, որ, ըստ սովորութեան, եպիսկոպոսական զգեստաւորմամբ Աւագ Սեղանի բեմէն կարգաց Առարտայի վերաբերեալ Ա. Աւետարանի համարները։

— Ժամ մը ետք, Հոգէ. Տ. Հայկասեր Վարդապետի գլխաւորութեամբ, փոքրը թափօր մը այցելութեան դնաց Քրիստոսի զոյդ բանտերուն՝ Ա. Հրեշտակապետ եւ Ա. Փրկիչ։ Առաջինին զաւիթին մէջ զտնուող Ա. Զիթենիին առջեւ եւ Ա. Փրկիչի մատուիին մէջ կատարուած Աւետարանական ընթերցումներէ ետք, Հոգէ. Հայրասուրբը խօսեցաւ Քրիստոսի չարչարանաց եւ Պետրոսի ուրացութեան մասին։

— Գէշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ սկսաւ «Խաւարման կարդ»ը, որ տեսեց մինչեւ կէս զիշեր։ Արարողութեան վերջին մասին, Գերշ. Տ. Շահէ Արք. Անձմեան կուռ քարոզով մը վեր հանեց «Եացի զիշեր»ուան փրկարար նշանակութիւնը։ Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ա. Հայրը։

* Ուր. 8 Ապրիլ. — Աւագ Ուրբար (Յիշատակ Խաչելութեան Տեալն)։ Կէսօրէ ետք, Ա. Յարութեան Տաճարի մեր վերնամտառուին մէջ կատարուեցաւ «Խաչելութեան» կարդ»ը, նախադահութեամբ Ամեն. Պատրիարք Ա. Հօր։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թազման կարդ»ը, նախադահութեամբ Ամեն. Պատրիարք Ա. Հօր։

* Շր. 9 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Ա. Զատկի)։ Առաւոտեան ժամը 9-15ին, Լատիններու Լուսաւորեայի հանդիսութենէն ետք, փոքր թափօր մը, Աւագ Թարգման Հոգէ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեանի գլխաւորութեամբ, մեկնենցաւ Ա. Յարութեան Տաճար, կատարելու համար Տաճարի դրան բացման աւանդական ձեւակերպութիւնը։

— Ժամը 10-30ին, Ամեն. Պատրիարք Ա. Հօր գլխաւորութեամբ, Միարանութիւնը մեկնենցաւ Ա. Յարութեան Տաճար, ուր կէս ժամ ետք, Ա. Գերեզմանի դրան կնքումով սկսան հանդիսութիւնները, Յոյներու Ա. Գերեզմանին շուրջ կատարած մէծահանդէս թափօրով եւ Լուսաւորեայի տրարողութեամբ։ Թափօրի աւարտին, իբրեւ հանդիսապետը՝ Գերշ. Տ. Ճէցմանոս Եպիսկոպոս եւ մեր Լուսահանը՝ Հոգէ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան մտան Ա. Գերեզման, ուրեկէ քանի մը վայրեկաններ ետք զուրս պիտի զար նուիքարական լոյսը եւ տեղացի յուստակիրներու միջոցաւ պիտի փոխադրուէր մեր վերջանատունը՝ Ամեն. Պատրիարք Ա. Հօր, որ Ա. Գերեզմանին նայող իր պատշզամէն պիտի օրհնէր Տաճարը խոնուած բազմադիմ ուխտաւոր եւ տեղացի հաւատացեալներու բազմութիւնը։ Անմիջապէս ընթացք կ'առնէ մեր թափօրը՝ գլխաւորութեամբ Լուսա-

Հան Հողը . Տ . Սեւան Վարդապետի , եպիսկոպոսական զգեստաւորումով : Մեր թափօրին կը հետեւէին Ղալիքներու եւ Ասորիներու թափօրիները : Վանք վերադարձին , Հայ արիներու եւ արենոյշներու առաջնորդութեամբ եւ անոնց փողերախումբերով Միաբանութիւնը յառաջացաւ դէպի Մայրավանք : Ճամբու կէսին , Գերչ . Տ . Շահէ Արքեպիսկոպոս եւ Լուսահան Հայրաբուրբ զգեստաւորւցան եւ «Քրիստոս յարեաւ» շարականը երգելով , նուիրական լոյսով մուտքործեցին Մայր Տաճար :

— Ժամ մը ետք , Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ժրագալոյցի արարողութիւն , որուն աւարտին Աւագ Աւեղանին վրայ իրիկնազէմի խորհրդաւոր ու յանկուցիչ Ա . Պատարագը մատոյց Հողը . Տ . Ասպետ Արդ . Պալեան : Յարութեան Հողեզմայլ շարականներու ընդմէջէն բացուեցաւ վարագոյրը ի յայտքերելով շքեղութիւնը տօնական օրերու հանդերձանքով զարդարուած Աւագ Խորանին : Ա . Զատկի նախատօնակին նախագահացեց Գերչ . Տ . Կիւրեղ Եպս . Գարբիկեան , որմէ ետք «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ , Միաբանութիւնը զգեստաւորեալ բարձրացաւ սեղանատուն ընթրիքի , որուն մաս կը կաղմէր Զատկական աւանդական կարմիր հաւկիթը :

* Կիր . 10 Ապրիլ . — ԱԱՏԻԿ ՑԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՈՅ : Գիշերուան ժամը 1ին , Մայրավանքի մեծ զանգը ոտքի է Հանած արդէն Ա . Յակոբեանց Միաբանութիւնը , որ կէս ժամ ետք , Գերչ . Տ . Շահէ Արքեպս . Աճէմեանի գլխաւորութեամբ եւ լուցեալ լապտերներով կը մեկնի Ա . Յարութեան Տաճար , ուր մէր վերնամատուուին մէջ կը պաշտուին դիշերային ժամերգութիւնը եւ մաս մը առաւօտեան ժամերգութիւնէն մինչեւ «Հարց» , երբ Միաբանութիւնը զգեստաւորեալ կ'իջնէ Ա . Գերեզմանին շրջափակը երիցս թափօր դառնալով անոր շուրջ , Հետեւողութեամբ Ղալիքներու եւ Ասորիներու թափօրներուն : Ա . Գերեզմանի դրան կարդացուած իւղաբերից Աւետարանէն եւ «Անդաստան»էն ետք Հանդիսաւոր Ա . Պատարագ կը մատուցուի Քրիստոսի Ա . Գերեզմանին վրայ , որ կը ճայնասփուուի խորայէլեան ուստիոկայանէն : Պատարագիչ Գերչ . Տ . Շահէ Արքեպիսկոպոս . կը քարոզէ Քրիստոսի յարութեան խորհուրդին շուրջ : Վանք վերագարձին՝ Հայոց թաղի մոլուքէն , առաջնորդութեամբ Հ . Ե . Միութեան արիներուն եւ արենոյշներուն , Միաբանութիւնը «Քրիստոս յարեաւ» շարականը երգելով կը յառաջանայ ու կը բարձրանայ Պատրիարքարան , ուր Ամէն . Պատրիարք Ա . Հայրը կը փակէ Հանդիսութիւնը :

— Կէսօրէ ետք , Նորին Ամենապատուութեան նախագահութեամբ Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատկական մեծ «Անդաստան»ը : Ցետոյ , Մայր Տաճարի արտաքին գաւիթին մէջ կատարուեցաւ Հողեհանդուտեան սպաշտոն՝ Հայ ազդի հին թէ նոր բոլոր ննջեցեալներու հոգիներուն համար :

* Բ . 11 Ապրիլ . — Բ . օր Ա . Զատկի (Ցիշատակ մենակունց) : Օրուան Հանդիսուոր Ա . Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ սեղանին վրայ մատոյց եւ քարոզէց Ամէն . Պատրիարք Ա . Հայրը : Խնչպէս Աւագ Հինդշարթի օրուան , Ժրագալոյցի Երեկոյեան եւ Ա . Զատկի առաւօտեան , այնպէս ալ այսօրուան Ա . Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ Ա . Աթոռի երկսեռ երդչախումբը՝ ղեկավարութեամբ Դոգրապետ Պր . Աւանք Գայայանին : Ա . Պատարագէն ետք կատարուեցաւ մեծահանգէս թափօր Մայր Տաճարին մէջ , զլիաւորութեամբ Ն . Ամենապատուութեան , որ ամպհովանիի տակ , Կենաց Փայտի մասունքով կ'օրհնէր Տաճարը լցնող հոծ բազմութիւնը : Թափօրականներ ի ձեռին ունէին սուրբերու մասունքներ : Թափօրէն ետք , Միաբանութիւնը խմբուեցաւ դասին մէջ , ուր երգուեցաւ «Ճանապարհ» շարականը եւ «Ճէր ողորմեա» : Ցետոյ բոլորն ալ «Քրիստոս յարեաւ»ի եւ Ա . Աթոռի շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարանի դահլիճը , ուր Ա . Պատրիարք Հայրը Ա . Պատարագի

նշխար բաժնեց բոլորին, փակելով չարքը Աւագ Եօթնեակի հանդիսութիւններուն :

* Գ. 12 Ապրիլ.— Գ. օր Ա. Զատվկի : Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխաղիր : Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Արդ. Յովտիմեան : Ապա Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարբիկեան նախազահեց ինդրամատոյց ուխտաւորներու նրնչեցեալներու հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին :

* Կիր. 17 Ապրիլ.— Նոր Կիրակի (Յիշատակ թիւրապը Յահատակացն մերոց յընթացս Ա. Համաշխարհայիմ Պատերազմին) : Բատ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Աեղանին վրայ Ա. Պատարագ մատոյց եւ քարոզեց Լուսահանը՝ Հոգչ. Տ. Աեւան Վրդ. Ղարիպեան, բնաբան ունենալով «Մի՛ զարհուրդիք յայնցանէ որք սպանանեն զմարմինն»: Խօսեցաւ մեր ժողովուրդին պատահած ջարդին ու տեղահանութեան մասին, տալով նաև պատգամը մեր մէկ ու կէս միւն նահատակներուն, որ է հաւատարիմ մնալ մեր եկեղեցիին, լեզուին, աւանդութիւններուն եւ ազգային սրբութիւններուն: Ա. Պատարագէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ եւ առաջնորդութեամբ քաղաքիս բոլոր հայկական միութիւններու արիներուն, արենոյշներուն եւ զայլիկներուն, Միաբանութիւն եւ ստուրաթիւ ժողովուրդ հանդստեան շարականներու երգեցողութեամբ ուղղուեցան դէպի Ա. Փրկչի ազգային կերեզմանատունը, ու խմբուեցան Արքայի նահատակաց յուշարձանին չուրջը, ուր հանդստեան կարգի աւարտին, Պր. Գէորգ Աեւեան կուռ ճառով մը խօսեցաւ մեր ազգին կրած անդարմանելի կորուստին մասին եւ կոչ ըրաւ բոլորին որ միացնեն իրենց ճիղերը Հայ արդար զատի հետապնդման եւ բարւոք լուծման համար:

* Գ. 19 Ապրիլ.— Ա. Կոյսի Աւետման հանդիսաւոր նախատօնակը պաշտըւեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Դ. 20 Ապրիլ.— Աւետումն Ա. Աստուածածնի: Աստուն, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպախսկոպոսի, Միարան Հայրերինքաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ա. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը մատոյց Տաճարին Տեսուչը՝ Հոգչ. Տ. Աեւան Վրդ. Ղարիպեան, եպիսկոպոսական խոյրի ի գլուխ:

* Շբ. 23 Ապրիլ.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարբիկեանի գլխաւորութեամբ, Միարան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ա. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատուին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 24 Ապրիլ.— Աշխարհամատրան (Կամաչ Կիրակի): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ա. Յարութեան Տաճարի մեր վերնամատուին մէջ: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարբիկեան մատոյց եպիսկոպոսական իր անդրանիկ Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ: «Ճաշու Գիրք»էն առաջ, Գերշ. Սրբազնը վարդապետական իշխանութեան գաւազան չնորհեց Ա. Աթոռի Միարան Հոգչ. Տ. Ռուբէն Արդ. Յովտիմեանի: Ա. Պատարագէն ետք կատարուեցաւ «Անդաստան», որ վակեց շարքը Զատկական շրջանի Ա. Յարութեան Տաճարի հանդիսութիւններուն:

ՊԵՏՈՂԵԿԱՐ



* Դ. 6 Ապրիլ.— Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախկին Փոխ-Նախագահ Պր. Նէլսոն Ռոռֆէլը Ա. Երկրի իր այցելութենէն օգտուելով՝ այցի եկաւ Ամեն. Պատրիարք Ա. Հօր:

* Բ. 11 Ապրիլ.— Ա. Զատկի տօնին առիթով, Նահանգային Կառավարիչ Պր. Ռաֆայէլ Լէմի, ընկերակցութեամբ Ռոտիկանապետին եւ այլ պետական դէմքերու, այցի եկաւ Պատրիարքարան:

* Գ. 12 Ապրիլ.— Նոյն առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ա. Հայրը, ընկերակցութեամբ Գերշ. Սրբազններու եւ Հոգ. Հայրերու, չնորհաւորական այցելութեան դնաց Յունաց Պատրիարքարան, Ֆրանչիսկեաններու վանք եւ Լատինաց Պատրիարքարան: Ապա, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի՝ այցելեց Պապական Նուիրակին եւ Անկլիքան Արքեպիսկոպոսին: Վերադարձին ընդունեց չնորհաւորական այցը Առորիներու եւ Հաղէ-բու Եպիսկոպոսներուն, իրենց միաբանութեան անդամներուն հետ միատեղ: Իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս, Հոգ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթոլիկ եւ Բողոքական այլ յարանուանութիւններուն:

* Դ. 13 Ապրիլ.— Նոյն առիթով, մինչեւ կէսօր, Պատրիարքարան չնորհաւորութեան եկան Յունաց Պատր. Փոխանորդը, Լատինաց Ա. Պատրիարքը, Ֆըրանչիսկեաններու Գերշ. Կիւսթուր, Անկլիքան Գերշ. Արքեպիսկոպոսը, Լուսերականներու եւ Արտար Լուսերականներու Երէցները, Հայ Կաթոլիկներու եւ Մարոնիթ Համայնքի ներկայացուցիչները, Ռուս եւ Ռումանական եկեղեցիներու առաջնորդ Հայրերը եւ այլ բարձրաստիճան հիւրեր: Ամենէն ետքը, Ն. Ա-մենապատուութիւնը ընդունեց չնորհաւորական այցը Քաղաքիս Հիւպատոսական անձնակաղզին:

* Ե. 21 Ապրիլ.— Խորայէլի անկախութեան 29րդ տարեդարձի առթիւ, կէսօրէ ետք, Երուածաղէմի Քաղաքապետ Ն. Վում. Թէտի Քոլլէքի կողմէ Դաւթի բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ալաննեան, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարբիկեան եւ Հոգ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Ուր. 22 Ապրիլ.— Ա. Երկրի այցելով Օտեսայի Եպիսկոպոսին ի պատիւ Ռուսերու վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգ. Տ. Սեւան Վրդ. եւ Տիար Գ. Հինդլեան:

* Ուր. 29 Ապրիլ.— Վիեննայի Ա. Ղաղարի ասպետները այցելեցին Պատրիարքարան:

ՅԱՀԵԼՈՒԱԺ

«Սին»ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄՔ ԱՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵԿԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻՔԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 1976-1980 ԹՈՒԱԼԿԱՆՆԵՐԻ ՀԻմնական ԱԼՂՈՎՈՐԻՒՅՆՆԵՐԸ — Խմբագիր՝ Շ. Ս. ԲԱՂԻՆԵԱՆ: ԵՐԵՎԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1976, էջ 128:

Հայաստանի Կոմիտսի 26-րդ Համագումարի Բանաձերը Հայաստանի Կոմիտսի Կենսկոմի Հաշուեառ Զեկուցման Առքիւ և Հայաստանի Կոմիտսի 26-րդ Համագումարի Բանաձերը: ՍՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻՔԵԱՆ 1976-1980 ԹՈՒԱԼԿԱՆՆԵՐԻ ՀԻմնական ԱԼՂՈՎՈՐԻՒՅՆՆԵՐԸ: ՍՄէն Կենսկոմի Նախագծի Մասին Զեկուցման Վերաբերեալ — Խմբագիր՝ Կ. Լ. Սարիբեկեան: ԵՐԵՎԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1976, էջ 35:

ՀԵՖԻԱՔԻՆԵՐ Խ Պատմուածեններ (Փողոցականի Գրագարան) — Կազմեց՝ Ն. Դ. Դարբեան: ԵՐԵՎԱՆ, «Է.Ա.Օ» ՀՐԱՏԱՐԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1975, էջ 128:

Պատերազմ Խ Խաղաղութիւն (Հատոր Զարրարգ) — Լ. Ն. Տուտոյ: Թարգմանութիւնը՝ Ստեփան Զօրեանի: ԵՐԵՎԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1976, էջ 518:

Թարսեղ Կեսարացին Խ Արա «Ավցօնան» Հայ Մատենագրութեան Մէջ — Կիմ Մ. Մուրագեան: Հայկ. ՍՍՀ Գիտ. Ակադեմիա — Մ. Արեգեանի Անուան Գրականութեան Խնասիտուտ: ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԿ, ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1976, էջ 270:

ՍՄէն Կենսունական Կոմիտէի Հաշուեսուութիւններ Խ Կուսակցութեան Հերքական Խնդիրներ Ներքին Խ Արտաքին Քաղաքականութեան Բնագաւառում (Զեկուցում ՍՄԷԿ 25-րդ Համագումարում, 1976 թ. Փետրուարի 24ին) — Լ. Ի. Բրեժնիկով: ԵՐԵՎԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1976, էջ 146:

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻՔԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 1976-1980 ԹՈՒԱԼԿԱՆՆԵՐԻ ՀԻմնական ԱԼՂՈՎՈՐԻՒՅՆՆԵՐԸ — Ա. Ն. Կոսիգին: ԵՐԵՎԱՆ, 1976, էջ 79:

Պիճի Արկածները — Խուսերէնից թարգմանեց՝ Ե. Ս. Զարեհեանը: Նկարները՝ Վ. Սուտէկի: ԵՐԵՎԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՀՈՎՄԻՒՆ, 1976, էջ 32:

Խանասորի Արշաւանը — 25 Ցուլիս 1897: Մատենաշալար Հայ Աղգասիբաց Երիտասարդական Միութեան, թիւ 1: ԵՐՈՎԱՆԴէմ, 1976:

Հայկական Մատենագիտութիւն Ե - ԺԲ. ՊՊ. (Հատոր Բ., Առաքել Սիւնեցի — Բէատրիկէ Հռոմայեցի) — Յակով Ս. Անասեան: Հայկական ՍՍՀ Գիտ. Ակադեմիա — Պատմութեան Խնասիտուտ: ԵՐԵՎԱՆ, 1976, էջ 1546 (Երկութիւն):

Հայկական Խ Ս. Գրային Աւումնասիրութիւններ — Խմբագիր Միքայէլ Սթօն: (Հայերէն և Անգլիերէն): Երուսաղէմ, Տպարան Ս. Յակորեանց, 1976, էջ 300: Յաւելուածական Հատոր թիւ 1 — Սիմն — Պաշտօնաթիւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան:

Քննուած Հոգիւոր Երգեր Խ Շարականներ — Ա. Գ. Ալֆերեան: (Հայերէն և Թրքերէն): Հայէպ, 1927, էջ 112:

Խլմի Հիսապ — Գլմմ բ Բագամի (Թրքերէն): Խոթանազուլ, 1881, էջ 288:

Ամրողական Դասընթացք Թուարանութեան Խ Գործնական Երկրաչափութեան (Բարձրագոյն Ընթացք, Ա. և Բ. Տարի): Պ. Պ. Ատրունի: Բ. Տպագրութիւն: Կ. Պոլիս, Գրատուն Հայաստան, 1922, էջ 672:

Տարրական Թուարանարիւն (Մատանր և Գրաւոր, Ա. և Բ. Տարի) — Դարեգին Դայլաֆեան: Աւումնասիկան Խորհուրդէն Վաւերացուած: Բ. Տպագրութիւն: Վերաբննեալ և Ճոխացեալ: Կ. Պոլիս, Գրատուն Պ. Պալենց, 1921, էջ 160:

Քերականութիւն Աշխարհարար կամ Արդի Հայերէն Լեզուի (Բ. Տպագրութիւն) — Հ. Արսէն Վ. Այտոնեան: Վիեննա, Միխեթարեանց Տպարան, 1883, էջ 2(5):

Նախնական Ծանօթարիւն Վանառական Կանոնական Գիտելիքներու Խ Տոմարկալութեան (Ի. Պէտա Աղգ. Նախակրթարաններու) — Պ. Պ. Ատրունի: Կ. Պոլիս, Տպագրութիւն Մաթեմատիկ Ամերէ, 1914, էջ 109:

Ակզրունի Երկրաչափութեան (77 Երկրաչափական ձեւերով — Աղգային Ռուսմաթեանաց Համար) — Ագոլի Դիստերվէդ: Թրգմ. Մակար Տէր Սարգսեանց: Աղեքսանդրապոլ, ի Տպարանի Գէորգայ Սանոյեանց, 1876, էջ 136:

Բանակի Թուարանութեան կամ Խնդրոյ Լուծմունքն ու Պատասխանները — Տիգրան Յ. Պօղահեան։ Կ. Պոլիս, Տապարութիւն Յ. Դավագիրեան, 1883, էջ 113։

Յանուար (Թատրոնի գումարի վեցերորդ) — Ակօթէ: Թարգմանեց՝ Մեսըռու Նուռաբեան: Զմիւռնիս, Տպագրութեան թէ, իւնի, 1909, էջ 182:

Սովետական Միության Հայրենական Մահմադավազի Մասին — ի. Սաաւեն:
Բուռերէնի Երկրորդ Համարակակութիւնից — Երկրորդ Համարակակութիւն:
Երևան, Հայպետհրատ, 1943, էջ 130:

Եղբիկ — Եղբ Աղանձոց: Ներկայ առաջարկությունները արտապուած է Հանրկե:
Արամեանի 1860 թուին Փարիզում հրատարակած օրինակից: Էջ 224:

Դաստիքը ժողովածութեան — Տիգրան Յ. Պօղաճեան։ Կարելը Ցաւելուածովը
Բարեփոխեալ և ձոփացեալ։ Եւ Տապարթ։ Ա. Պալիս, 1885, էջ 492։

Ա. Երանց կենցածիքի թիւ Ա. Երանց Հետ Վարակող Ստանակը (ի Պէտք վարժարանաց
— Գահեա՝ Խոսակեն Քառակ Հայութ Անդամ Կանաչ Շահ Ապահանաւած և Ա. Պահա

— բրոց Հայութ Երվանդ Հովհաննես: Առգելութեա խարզանաւուած: Կ. Կոլու, Տպարան և Կազմակերպութեա Սպառաւան, 1914, էջ 199:

Հայոց Յանձնապետությունը (Առաջարկի և Երկրաբորդ Սամ) — լամփիք: Գողագործութեա: Կ. Պալիս, Տպագրութիւն Պ. Պալլազիան, 1922, էջ 152:

Փարբեր գործադրք Հայկական Խորհրդական Ընդհանուր Օլիմպիադա Ֆարբեր Գեղարվեստական Տպարան Խ. Մաթիկեան, 1930, էջ 23:

Միութեան: Փարիզ, Տպարան Տէր-Յակոբան, 1931, էջ 39.

Известия Удмуртской АССР. — № 8. — Казань: Удмуртское книжное издательство, 1943. — № 74.

Արմավազի գուղքը՝ Կանոնադրին: Եթիւ — Ե. Տ. Երեսեան: Առաջին սահմանադրության մասին օրենքը՝ 1951 թ.՝ 7 բարտէսկ երեսան, Հայոց տէնհայտան, 1952:

Սամոյ Մրկը — (Սպասագրութ 1855թ): Էջ 45:

առևտութեան, Հայկ. ԱԱՀ Գիտ. Ակադ. Հրատ., 1970, էջ 78: (Թաւուքրէն): «Սաման Ծանրի» Պատումների Քննական Համեմատութիւն — Արուսեակ Սահմակ

եաւու: Հայ կական ՍՍՀ դիմութիւնների Ակադեմիա — Հայագիտութեան ի. Աղ պազրական ինստիտուտ: Երևան, հրատ. բառ նախարարին, 1975, էջ 188:

Վաղ Միջնադարեան Հայկական Քանիքակը — Իւսն Ազարեան։ Հայկական ՍՍ
Դիտութիւնների Ակագեմիա — Արուեստի Խնախիւռուս։ Երևան, 1975, էջ 136

Հայ Միջնադարեան Կամացեր (Ժ. - Ժ. գ. գ.) — Հ. Ա. Սիմոնեան: Հայկական Առշադարձ Մատուցություններ: Երևան, 1975, էջ 294:

Բառարկություն — Հ. Մ. Ամալեան (Քննական բնագիրը, առաջարանը և ծանօթագրութիւնները : «Մատենագիրան», Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին Առընթեր Մաշտացի Անուան Հին Զեռագրերի ինստիտուտ : Երևան

1975, № 445; Գամանակից Հայերէնի Տեսութեան Հիմունները — Դ. Բ. Զահոռէկեան։ Հայկական ՍՈՀ Գիտութեանների Ակադեմիա — Հ. Անառեանի Անուան Լեզուի հնագույն լուծութեան մասին։ Երևան, 1974, Էջ 586.

Հայոց Ազգային Կոտորածակի պատճենը — Հրատ. Խմբագիր՝ Հ. Գ. Յակոբեան։ Հայկական
Ազգային Կոտորածակի պատճենը, Եղանակ և համար 1977 թ. 250.

Գրիգոր Նաբեկացու Լեզուն և Օճը — Վարագ Առաքելի եանէ: Հրատ. ըստ նույնացման 1875 թ.

Հարցներուն: Երևան, 1975, էջ 272:

Փամբանելիք Հայոց Եկեղեց — Հատուր 2 — Զեւրաբնորիւն — Ս. Գ. Արքա

Համեմատ, Ն. Ա. Պարույրականի և Հ. Ա. Օհանեսանի ըրևան, 1974, էջ 586:

Ամերիկական պատմություն — Երևան, Հայաստանի հանրապետության Գլուխական գործադիր համակարգության համար, 1975. էջ 207:

Історія української літератури — з. 2. «Культурна Україна», В. І. Ткачук та ін. к. ф. Ц

Հայ Արտևեսը Միջնադարում — Սիրաբի Տէր-Ներսէսեանի Հայկական ՍՈՅ Գիտութիւնների Ակադեմիա — Արուեստի Խոստիւուտ: Երևան, 1975, էջ 132:
Երեւան — Միջնադարեան Յուշարձանները և Վիմական Արձանագրութիւնները — Կարո Ղաֆարարեան: Երևան, Հայկ. ՍՈՅ ԳԱ Հրատ., 1975, էջ 249:

Ժորժ Ա. Խետան Ազգակիւր (1861 - 1920) — Դիմութեան Պատմութիւն։ Առանձնա-
տիկ՝ «Հայաստանի Կենսաբանական Հանդէս», Հատուր Ի՛լ, Թիւ 5, 1975։
Երևան, 1975, էջ 102 - 103։

Արեալ Զայթը (Պատմուածքներ) — Մուրաս Մանուկեան: Երևանպէմ, Տպ. Ս. Ցակովսկէանց, 1976, էջ 128:

Անառակի Հեր (Տուշեր) — Գառանիկ Ստեփանեան։ Երևան, «Հայպատակ» Հրատարակչութեան, 1976, էջ 185։

Նեկիր Ժազգածությունը 6 Հատուրդ — Պարոյք Սեակը: Հատուր 6 — Գիրք Մնացորդաց: Կազմով՝ Ա. Վ. Արքստակէսեան: Երևան, 1976, էջ 446:

Հայ Մշակոյթի նշանաւոր Պարծիները (Ե. - ԺԲ. Դարեկը) — Խմբագրութեամբ է.
Բ. Աղայեանի: Երևանի Գետական Համալսարան՝ Հայագիտական Հետազոտութիւնների կենտրոն: Երևան, Համալսարանի Հրատ., 1976, էջ 590:

Հելլանակի Հեռասւերը (Հին թունական Առասպելներից) — Թարգմանեց՝ Հ. Վ. Վարդապետյան, Երևան, «Հայաստան» Հրատ., 1975, էջ 19:

Հայկական լեռնաշխարհ — Ա. Մ. Ռուկանեան։ Ֆիզիկա-աշխարհագրական համառոտ ակնարկի երեսն, Գիտական շամալու։ Հրատ., 1976, էջ 37 և քարտեղ։
Զարանի Հոգրուկը — էլեկտրօրա Մանդալեան։ Նախագպրցականների համար։

Ըներք, Երևանի Համապատասխան Հրատարակչութիւն, 1976:

Խամսան: Հրատարակչութիւն, 1976, էջ 31:

Խորհաւըներ Աւագցին: — Վ. Ա. Սուբուռլինսկի: (Հատուածներ «Հարիւր Խորհաւըներ Աւագցին» գրքից): Թարգմանեց՝ Հ. Վ. Մամիկոնեան: Հայկական ԱՈՀ Մանկագրաժամանակակիցներ, 1976, էջ 61:

Հայոց Պատմութիւն (Ա. Մաս) — Պատրաստեցին՝ Նուռար Քիւփէկեան և Սիլվա
Տէր Ստեփանեան։ Գծագրում և էջագրում՝ Փոլ Մաքսուրեանի։ Նիւ Եսրք.
Առաջնարդարան Հայոց Ամերիկայի, 1975, էջ 86։

Orwodrig 1977 — U. kymysh

Orvostig 1977 — 8. Երևանի էմբ.

Օրացույց 1977 — կ. Պալատի Ա. Փրկիչ Հիւանդանոցին Հայոց

Հերոսական մատանիզմի հայություն (Հայերէն և Անգլերէն): 60 ամերակ Հայ նահատակ-ներուն Նիւ Սարք, Առաջնորդաբան Հայոց Ամերիկայի (Անթրիպասի թեմ): 1976, էջ 151:

Կանոն Օրինաւթեան Սրբայօս Միթառնի (Հայերէն և Անգլերէն): Երաւաղէմ,
Տպարան Սրբաց Յակոբեանց, 1976:

Խոհեմարտիկ, Ազգային և Հասարակական (Բ. Հատուր) — Անդրանիկ Անդրեասիս: Լոռ Անձրէլը, Տպ. «Նոր Օր»ի, 1976, էջ 392:

**Բնութան Բարյական Օրենքը և Մարդկային Խշանութիւններ — Առէլ Գէպրգ
Պալեան:** Պ. Գ. Պալեան Մատենաչար, թիւ 3: Պոսթըն, Տպարան «Հայրենիք»,
1976, էջ 10).

Առ Խակոբան — Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Համեմատականը և մը Ցանարէն Բնագրերից: Մայր Աթոռ. Ս. Էջմիածին, 1978, էջ 709:

Կիսաղտական Պատմութիւն Խորանուրդական Բժշկութան (Մեր Խժշկները Հանրապետական Երջանին, 1923-1975) — Տպաքնություն. Վարդ Եփիկանեցի: Խաթանյուլ, Աւտուցչաց Հիմնարքի Յակով Աբելի եան: Տպարան, 1975, էջ 120.

Գեղարք (Սուրբիանաց Տարեկանք, Ա. Տարր, 1975) — Խմբագիր՝ Հայկ Պարիկեան։
Հալէպ — Սուրբիա, Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Մ. Մատենագիտական Յանձ-
նախաւմբի, Տպարան «Արեկը», 1976, էջ 548։

Արարողութիւն Մորոյ Պատրաստի և Կարգ Ազօրից Հաճախեան Ժամուն — դ.
Տպագրութիւն՝ Երևանապէմ, Տպ. Ս. Յակովեանց, 1975, էջ 208:

Մայր Յաւաղի Զենապետց Մըրոց Յակոբիանց (Հատուր Եօթներորդ) — Կազմեց՝ Նորայր Արքեպոս. Պաղարեան: Հայկական Մատենաչար՝ Գալուստ Կիւլգէնկեանի հան Հիմնարկութեան: Երևանադէմ, Տպ. Ս. Յակոբիանց, 1974, էջ 551:

Գանի-Ճապ Ռուսօ (1712-1778), կեանըը - կազմեց, զ գերգեան: Երկուիս, Կիորսո, 1954: Լաւ Աննէլըս, Տպաբան Էնոր Օքսի, 1976, էջ 110:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պատմութիւնը որպէս ուղեցոյց	Ա. 4.	82
ՃՆՈՐՀԱՅՐԱԿԱՆՆԵՐ		
Ճնորհատրական նամակ Ն. U. O. S. S.		
Կազգէց Ա. Ամենայն Հայոց Վեհափառ		
Կաթողիկոսէց		
Ճնորհատրական նամակ Ն. U. O. S. S. Խորէց		85
Ա. Մեծի Տաճա Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսէց		86
Ճնորհատրական նամակ Հ. Բ. Ը. Միութեան		
Ֆկեան Նախագահ Նորից Վսեմութիւն		
Տիար Ալեքս Մանուկեանէց		
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ		87
Ժամանակագրութիւն Գրիգոր Շղթայակիի	Ն. ԱՐՁԵՊԱ. ՇՈՎԱԿԱՆ	88
ՂԱՄՄԱԿԱՆ		
Նախապատմական Հայաստանը Եւ Օրա		
ՀՅագոյն Բնակիչները	ԳԵՈՐԳ ՀԱՏԻՏԱՆ	93
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ		
Ազաթանգեղոսի Պատմութիւնը Անգլիերէց	ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ	99
Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ		
Եկեղեցականք - Բնմականք		103
Պաշտօնականք		107
Հանկ «Սիոն»ի Խմբագրութեան Եւ Գ.		
Կիկավէնկեան Մատենադարանին կողմէ		
Ստացուած Գիրքներու		108
Բովանդակութիւն		111

C O N T E N T S

EDITORIAL

- History as a guiding influence A. K. 82

MESSAGES

- Congratulatory letter of His Holiness
Vazken I, Catholicos of All Armenians

- Congratulatory letter of His Holiness
Khoren I, Catholicos of Cilicia

- Congratulatory letter from
Mr. Alex Manoogian

CHRONOLOGICAL

- Chronology of Gregory the Chain-Bearer Archbp. N. Dzovagan

HISTORY

- Prehistoric Armenia and its ancient peoples

Kevork Hadidian

REVIEWS

- The English translation of Agathangelos

Paylag Antabian

- Monthly news from the Armenian Patriarchate

- Books received by the C. Gulbenkian Library

- Contents

Yearly subscription: 10 U. S. Dollars

All correspondence should be addressed to:

Ara Kalaydjian, The St. James Press

P. O. Box 14001, Jerusalem — Israel